վում ու կորչում և մեր հետեից:

Ավտոմեքենաները սլանում են ժամանակից և  
արագ:

Թիֆլիսը հետեւմ մնաց: Փակագծող բլուրները  
նայում են: Ճամբու դնողի արագիցիոն ձեռվ նրանք

թափահարում են սպիտակ թաշկինակը մեր հետեից,  
սպիտակ տները: Տները նորակառուց: Սոցիալիստա-  
կան:

Ապշած ու վարանոս գոմեշները հիմար աչքերով  
դիտում են մեքենաների վաղքը, ապա անհետանում  
փոշու քուլաներում:

Անա մեկը վարանում և ճամբի միջին: Հաշվի չի  
ուզում առնել մեքենայի պատոված ու ահազանգող  
ձայնը: Տերը խելակորույս վրա յե հասնում պատ-  
րաստ թողնելու իր մարմինը մեքենայի անիմսերի  
տակ, գոմզի փոխարեն:

Փոքրիկ ճահճուտներում ցեխաթեավալ գոմեշները:  
Գորտի կռաց:

Կուրի ժապավենը վոլորուն: Մարերի ստորոտնե-  
րով և գաշտերով:

Հեռվում անտառապատ լեռների թափշա սապատ-  
ները: Ապա կապտամշուշ ու արծաթազոծ բուրզեր,  
բուրգիր, հորիզոնի սպիտակ քաթանի վրա:

Արտեր, գոյնզգույն: Հողը ակոսաշար: Մե, սե:  
Վայրի ծաղիկներ աբահերում, նախշուն չթի թոփերի  
պես, վորը վրբուռմ և քամու չնչից:

Մենք անցնում ենք և մեր շուրջը բնության  
նկարչական ցուցահանդիսն եւ:

\* \*

Հանդիպակած բարձրավանդակի վրա ծվաբել և  
Մծիրին: Ասես հեռուներից կարկառած մի ձեռք, մա-  
տուցարանի վրա դրած հետ և տանում պատմության  
այդ վերջին բեկորը: Կամ թե կարծես մի զանգ և նա,  
դարերի փոշուց պեղված, վորը ծեր մի զերեզմանափոր

կարծես շըպրտել և բլուրն իվեր և բլրի գագաթից նա  
նայում ե կույր ու անթափանց։ Անատամ ու անկզակ  
այդ գանգը։

Նորից լիոներ չոքս դին, նորից վանքեր ձորհ-  
րում ու բարձրավանդակների վրա։

Մցխիթը՝ Կուրի ափին պըպղած։ Մցխիթը՝ ա-  
տամնավոր պարիսպներում, Մցխիթը՝ կույր աչքերով։

Իսկ գեմում, անտառների կանաչից նայում ե  
Արմագին, թևատված խաչի կերպարանքով։ Անտեղ  
գեռ մնում են Արտամազդի պաշտամունքի հետ կապված  
հուշարձանները։ Այդ և ասում հենց նրա ահունը։

Այն պարիսպները, վորոնք քարակոփ ու յերկ-  
տակ դիրք են մտել զեռ գարեր առաջ, վորոնք այն-  
քան անառիկ են յեղել, վորոնց վոտները մարդկացին  
արյունով և լվացվել և վորոնց շուրջը սրհասական ճա-  
կատամաբտեր են մզկել, նրանք ահա, անառիկ այդ  
պարիսպները, խոնարհված ճամպա ինց տալիս մեզ։

Վանքը ծվարել և պարսպից ներս, լույսից հա-  
լածված ու վանդակում փակված բույս նման, և իր  
ջարդված թերեր վար խոնարհել։

Նրա թիվերի տակ քանի՛ արքա, քանի՛ իշխան, քանի՛  
կրօնապետ։ Անցած դարերի տիրակալները, վորոնք  
իրենց ամբողջ հզորությունն ու փառքը տապանել են  
մարմարե շիրմաքարերի տակ։ Փթել։ Փոշիացել են։ Ահա  
չերակլ ։, չերակլ ։, Մուխրանակի իշխաններ, հոգեվոր  
իշխաններ ու «անհոտանելի» սրբություններ։ Մեր վոտ-  
ները քերում են նրանց մարմարե հիշատակները։

Արքաները հանգչում են։ Մենք ստեղծագործում։  
Պատմությունը ծածկել և նրանց իր հոկա գրքի ծալ-  
քերում։ Դարերը զերեղմանել են նրանց։

Ու նրանց հիշակակների տիսուր բեկորների մոտ,  
ահա նոր աշխարհի, ստեղծագործող նոր մարդկության,  
ուժի ու կամքի, հղուության ու անպարտելիության  
սիմվոլը—բայլչելիլյան Զագեսը։

\* \* \*

Կուրը վոլորվում ե համբընթաց և ծավալուն։

Ալիքները մեռնում են նրա հանդարտավիատ մա-  
կերեսում։ Խաղաղ, անխոռվ, ծուլ։

Ազգպես և սակայն, յերբ նա վոլորվում ե Մցխի-  
թի մոտով։ Յերբ դարերի զաւամյալ այդ պառավը փոր-  
ձում եր իր կույր գեմքը դիմել գետի պղտոր հայերում։

Իսկ յերբ նա դեմ ե առնում բայլշեիլյան ուժին  
ու կամքին, այնտեղ փոխվում ե։ Անտեղ փոխվում են  
զարերի նրա ծուլը ընթացքը, նրա հանդարտությունը։

Անտեղ նրան շարտում են դեպի կրանք, գետի  
ստեղծագործություն։

Յեվ այն Կուրը, այն հանդարտ ու ծերունաքայլ  
կուրը, վոր վոլորվում ե անշտապ, այժմ վրնջում ու  
սլանում ե վարվուն յերիտասարդի թափով։

Նա սլանում ե բիտոնակերտ սահանքներով ու  
մոնչում տարերային և սանձարձակ։

Վար և վազում արագաթափ ու մոլեգին, և գուրս  
ժայթքում փրփրայերախ ու գաղապուն։  
Ասես դարեր սանձահարված ու վանդակված տակու-  
ներն են, կտրել շղթաները, ջարդել պողպատ վանդակ-  
ները ու մռնչում։ Զրափոշին ու փրփուրը գուրս են  
ժայթքում ոռւնդներից դարհուրելի։

Բետոնակերտ արգելակները, — Զագեսի յերկաթե  
սանձը ջրերի զաղաղած յերախին, ավելի է բորբոքաւմ

նրանց կատաղությունը։ Յեզ արդելակներից անդին, չուրը յեռում ե, վընջում և գուրս ժայթքում, ասես հսկա հրաբխաբերանն ե, վոր դուրս ե նետում ընդերկրյա ուժն ու հուրը։

Ու գաղնում ե ինքն իր վրա, վընջում, մոնչում և կուրն այն հանդարս, վոր լիզելով պատվանդանը հին վանքերի, այնքան դանդաղ ծուլանում եր։

Բայց կիկան ուժը պարզեցիլ ե նրան նոր կյանք, նոր նաևապարհ, նոր պատմուրյուն։

\* \* \*

Ժայռաշրջան այս ձորերում, վանքի սրբի արքաշաղուն այս ձորերում, ուր հորիզոնը ծվատվում է լեռների անդիմադրելի ժանիքներից, ուր գեռ իր կուրը, մուժ նայվածքով խարիսխում ե պվատականության փոտած զանգը, ծեր Մծիրին, ուր Մցիսեթը գեռ արքաների մարմարից ու պղնձաշիրմաքաբերն ե պատսպարում, ուր Արմազին, թեվատված այդ խաչարձանը՝ կուցած գեռ պահում ե կուտաշտական իր աղոթքարանը, այս ձորերում ահա, մեր դասակարդը կերտել ուժի, կամքի, բայց կիզմի անխորտակ իր ամրոցը։  
— Զագեսր։

Վորպես մարմնացումն այդ ուժի, վորպես հրամալողը պատմության, վորպես բնության անհնաղանդ տարրերքը սանձարհարող, միլիոնների կամքը, վորպես դրոշակի, վորպես պատգամ, ահա բարձրացել է ինքը բրոնզաձույլ ու հաղթական առաջնորդը՝ Լենինը և իր հզոր ցուցամատով գծում ե պատմության նոր ճանապարհը։ Յեզ հնապանդ նրա մատի ցուցմունքին, ահա ջրերը փոխել են իրենց ընթացքը, իրենց թափը, վը-

ջում ու շարժվում են նոր ճանապարհով։

Ռազմական հրամանի պես հատու և անհետաձըղ գելի, ահա ալդ մատը թիւլաղբում ե տարերքին, կյանքին, պատմությանը։

Յեզ բրոնզաձույլ այդ հուշարձանը, իր վեհությամբ ձածկել և այս ձորերի յերբեմնի հմայքն ու գեղեցկությունը։ Նսեմացրել ե բոլոր «սրբություններն» այս ձորերի և փոշիացրել աստվածները։

Լեռներ, լեռներ, սապատավոր ու բրդակե, ինչքան ել ժայռե համառությամբ զինվեք դուք, լեթե ուղենանք, ձեզ ել կսանձենք, ձեզ ել կվիրահատենք, ձեզ ել ցըիկ կտանք, լեթե բրոնզաձույլ այն ցուցամատը հրամալի։

Զեր վեհությանը չենք խնայի։

### 3. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ'ՆԵՐԸ

Խորհրդային Վրաստանի կուլտուրական հիմնարկները հոյսկապ տպագորություն են թողնում։ Նորակառույց թանգարաննի կենդանաբանական մասը վերին աստիճանի հետաքրքիր ու թանգարժեք և բնական առանձնահատուկ պարմաններում՝ ահա բոլոր զիշտիչներն ու պատառողները՝ Վագր, առյուծ, բորենի, վարագ, արծ, գալլ, արծիվ, Արհեստական ճահճուտն իր բնակիչներով հսկալական արագիլներ, զորաեր Ոձեր, Թոչունների բոլոր թեփերը և թիթեռների բոլոր գյուները։ Զկների աշխարհ։

Նույնքան հարուստ ու հետաքրքրական ե համալսարանային թանգարանը։ Մանրանկար ու թանգարին մագաղաթներ, վոսկեձույլ ու ականակուռ սրբապատկերներ, քարե, բրոնզե զարերն իրենց առանձնա-

հատկություններով՝ ահա նախում են ապակիների տառկից:

Իսկ Ստալինի անվան մետաղագործարանում, պղնձագեմ մարդիկ պղնձին ու յերկաթին տալիս են նոր ձեւ, նոր գասավորում:

Թիֆլիսի ապրում և իր ստեղծագործ առորդակավար և մեր գրական պատգամավորությունը հետաքրքրությամբերթում և այդ առորդական:

#### 4. ՎԱՐԴԵՐԻ ՎԵՐ ԱՃԻՄՄՅՆ

Նորից կապտամշուշ լինանկարն և մեր գեմ կեղակի վրա մանիշակագույն բեկրեկուն գծեր: Նորից մեքեքնաներն որորփում ու կծկում են քարքարոս շունչն:

Գնում ենք հարթավայրով: Արտերի ծփուն ալիքների ափով:

Արտերը սրտաբաց ժպտում են:

Ապա հարթավայրը վերջանում և և սկսում ելիքերը: Մեղենաները մաղլցում են:

Արտերից այնկողմ, բլուրների ու սարերի կորացած մեջքեր: Ասևս զեղջուների խմբերը կոսցած քաղում են իրենց արտերը: Կամ թե թափամազ վոչխարների հոտն և փակել ու բռնել հորիզոնը: Այս, ճիշտ ալզպես, վոչխարների հոտի նման, իսկ այն մեկը, ուվելի քարձրականգուն այնսարը, կապույտ կապանակ հաղած, հովվի նման, կանգնել և հսկում և հոտի ապահովությանը:

Յերկինքը ջինջ և ու հստակ: Յերկնքի միապապաղ ջրերում, սպիտակ կարագների նման լողում են ամպի ծվենները: Խորտակված առագաստանավի նման ցրիվ եղալիս այն մի ամպակույտը:

Վերեկը լերկարում և Շոսեն ձգվում և որտերով, սարերով ու ձորերով:

Շոսեյի ավելքով արտի ծփանք: Վալրի սովորակ վարդերի վնջեր: Վալրի կարմիր կակաչներ, դեղին խնկածաղիկներ ու անթառամ ծաղիկներ, կազմականգակածաղիկներ, վայրի շուշան:

Ո՞վ և ցաներ, ով խճամել, վոր իմաստուն ոլարտիզպանն և կյանք տվել ծաղիկների այս ծովի:

Նորից վերելք: Շոսեյի կամակոր վորուաներ և ուրների ու սարերի լանջերին: Նորից վերելք:

Ահա վերջին բարձրունքից, պատոված սրտի նման մեւ առաջը փոփում և Գոմբորի վիթխարի ձորը՝ կանաչապատ թափշյա: Կապույտ սովերներով:

Չորում, կանաչի վառ փոնին, կարմիր, կղմինդրափայլ գյուղեր, յուղաներկի վարպետ վրձինուկորի պես:

Կախիթիան և մեր գեմ:

Գոմբորի ձորից անդին, նորից ձորեր ու հարթափայրեր: Ալազանի պայծառ զաշտավալը: Խելին:

Ալազան զետի շուրջը, բնության հրաշալիքների ծոցում, քար ու ցեմենտ և, զինամիտի պայթյունն Բալլիկիլան անհանգիստ ձեռքն և գործում: Հիղբոկացանի նոր աշխատանքներ:

Կովկասյան լեռների վիթխարի շղթան ձգվում ու կորչում և մշուշում: Ասես հակալական մեր զորաք հակն և շարժվում: Ուզիդ, կանոնավոր, գիսցիպիլինար:

Խելի զետը հետ և նահանջել իր ափերից և քարակոշակն անշրթունք բերանի ատամների պես ձարձարում են:

Գհատափին մի գյուղացի թրջում և իր տրեիները

և հաղթամարմին գոմեշներն իրենց կեսորյա ծուլնամազն են կատարում:

Մեքենաները ճեղքում են Խեվին և ջաւը թըշշում և նրանց անիվսերի դարձուարձում:

Անցնում ենք զյուղերով պայծառ, կոկիկ: Կարծիս մի քանի խաղընկեր մանուկներ քաղաքից հավաքել են ընդեղենի գուշնզույն տուփերը և կանաչի վրա խաղալով—դարսել են. իսկ հանճարեղ մի նկարիչ նըկարել և այդ խաղը: Ազգպես են մոտակա զյուղերը:

Վարդիսիբանին ահա: Վարդերի անկյունը: Այսպես ե այս զյուղի անունը: Վառվող վարդեր ու վազվող վարդաղեմ մանկիկներ: Յերկու վարդեր, կյանքի ու բնության: Ահա Վարդիսիբանին:

Վարդերի հրդեհը բորբոքվում է զյուղի թաղերում: Պատերից ներս պատերից դուրս:

Ասես քամին հրդեհից բոցեր ե շպրտել հեռուները և ահա զյուղից այն կողմը, ճանապարհին. հաջորդ զյուղում, նորից վարդի կարմիր բոցերը:

Զինարիների պահակախումբը մեզ հանում և թերպից և առաջնորդում և կախեթայի հրաշալիքը—Ծինանդալին:

Հեռվից կանաչ, բոցեղին լեզուների նման, յերկինքն իւլեր ձգվում են յեղենիների ուղղածիդ հասակները:

Մտնում ենք Ծինանդալի: Յեղենիներն տուաջնորդում են:

Հեռվում անտառապատ կապույտ ու մանիշակի լեռներ: Հեռվում կովկասյան վիթխարի լեռնապարը:

\* \* \*

Ծինանդալի: Ծինանդալի:

Ի՞նչ կրծքեր են զարդարել քու անուշաբուլը վարդերը: Ի՞նչ հասակներ են որորվել քու յեղենիների սովերում ու անարիկ վիլաներում:

Այստեղ հղվացել ե Ալեքսանդր յերբորդը: Իր սիրուհիներին նա բոռնցքաչափ վարդեր և ձոնել: Կախեթի գիտին և ձոնել նրանց և այդ գինուց ավելի կարմիր կախեթի զյուղացու արյունն և ձոնել

Ալեքսանդր ձավճավածեն այստեղ մտրակել ե իր զյուղացիներին, խոշտանդել, և ապա անարի վիլաներում գրի առել իր յերկերը:

Ալեքսանդր Սերգեյիչ Գրիբուժեղովն այստեղ և համբուրել Նինա Ալեքսանդրովնա ձավճավածելին և վարդարուլը այս վիլաներումն ե յեղել նրանց հարսանիքը:

Այստեղ մի կիսակործան յեկեղեցի կա, ծուռտիկ խաչով, ուր ամուսնացել են Նինան ու Գրիբուժովը:

\* \* \*

Հարդելի մեր պոետը, վոր Արագի տփին իր «բոստանն» և յերազել, այժմ ձեմում և «զրախտանման այս վիլաներում»:

— Սիրելի Սվո, այգակն ե, ուր քու Արագամերձ բոստանի «փափազը», ուր բանվոր դասակարգի նվաճումները կախերի վրա, «Աստծու» վրա, բնության ու տարերքի վրա: Յեղ այդ նվաճումների շնորհիվ այժմ մենք, միասին ձեմում ենք Ալեքսանդր Յազի ամառալին հրաշալիքներում, հարդելի Ավո:

Այժմ ալսուեղ աճում և զարգանում և ծինանդալիի  
Խորհին տևությունը:

Վարդի ծառերը ժատացին մեղ, բարձրահասակու  
անապիկ: Վարչարաջուր շատրվանը վողջունեց իր ծիա-  
ծան թեվերը թափահարելով ու վարդի, յեղենու և մագ-  
նոլիայի փոնի վրա՝ նկարվեցին Անդրկովկասյան գրող-  
ները՝ Ծինանդալիի հոկտեմբերյան սերունդի—ժանուկ-  
ների ու պատանիների հետ:

Յերբ արել ծածանեց իր ծիրանի գրոշն արեմուտ-  
քում, յերբ ամպի ծվենները կարկամեցին, յերբ Կով-  
կասյան լիսների վիթխարի պարը վողողվեց վոսկեկար-  
սիր գուցներով, յերբ Կախիթիայի վրա թանձրացավ  
իրինաւիին կապուտ մշուշը, մեր մեքենաները դուրս  
առաջ, ին յեղենիների միջից և Ծինանդալիին մնաց իր  
վարդերի, ցատկատող տասնյակ մանկիների և սրատ-  
ժայի մեղ ճամբա դնող գեղադիմ կամանց ու աղջիկ-  
ների հետ:

Դեմում հունիսյան վերջալուսի հրե թեվերը լեռ-  
ների ու լազուրի վրա:

Դեմում վոլորտներ, վերելք, ու վայրեջք: Յերկար  
ու զյարդին ճանապարհ: Հունիսյան զով զիշեր, վոր  
եռն ակատարների վրա՝ կծող ցրտի յե փոխվում:

\* \*

Գիշերանում եւ Լիալուսինը կաթնաջուր և թափել  
Առների լանջերին ու լցրել ձորերը, Լիալուսինը վա-  
զում և մեքենաների հետերից: Լիալուսինը, բացված  
մաղնոլիայի նման, վար և կախվել լաղուրից:

Սասպերը ծակել եւ յերկների կապույտ սավանը և

ձորերում ջրերն են խշխաւմ: Ծառերը մեղմ ու միա-  
լար սվալում են զեփուսի իմրդը:

Ահա բարձրարելը այն մի ժայռը, զիրեմիորի  
նման թեվերը տարածած, զեկավարում և ծառերի ու  
քամու զիշերային համերգը:

Սարերում ցուրտը կծում եւ Մինչև վոսկորներն և  
թափանձում: Քամին արշավում ու վլոջում: Պատու-  
պարիվում ենք շորի վերջին կտորով ու լրազրերի ծվեն-  
ներով:

Ցրտից ծնոտները կողում են, ատամներն իրար  
զարնվում:

Քամու թեվերի և փոշու զեմ կովելով մեր մեքե-  
նաները, լուսավորում են քարքարութ ճանապարհը և  
արշավում:

Գիշերվա ժամի չորսին մտնում ենք «Որիանո»:

## 5. ՀԱՅԻ-ԲԵՆԴ

Վրաստանում՝ Հայաստանի և Աղրբեջանի գրող-  
ների պատվին զորահանդես տեղի ունեցավ: Վողու-  
նեցին իրար գրական բանակն ու Վրաստանի Կարմիր  
Բանակը: Հայաստանի զրոյները վերցրին բանակի  
կուլտուրական շեֆությունը: Նույնպիսի զորահանդես  
տեղի ունեցավ և Աղրբեջանում, Հայի-Բենդում:

\* \*

Յերկաթուղու կայաբանից այն կողմը փով՝ և  
Գյանջան: Յերբեմնի արյան և կոտորածի, աղղամիջ-  
յան ջարդերի ալս որրանը, աշխատանքի հոկայական  
մեղլանոցի յե փոխվեր:

Հին Գանձակն ել չկա: Հսկայական կամուրջով հայն  
ու թուրքն իրարից բաժանող Գանձակն ել չկա:  
Բարձրանում ե նոր, ստեղծագործող ու շինարար  
Գյանջան:

Այստեղ վիթխարահասակ շինարիներն են ձգվում,  
բայց շինարիներից ավելի հաստատ ու փառավոր, ինը-  
բեմնի արնալիք այս հարթավայրում, բարձրանում են  
ձեթ-ոճառ զործարանի, մահուղի գործարանի, սկրմա-  
զտիչ կայանի, բանվորական բնակարանների նորակա-  
ռուց ու ժամացող շինքերը:

Բայլշեիկյան կառուցողական «վարակիչ հիվան-  
դությամբ» բռնվել ե և Գյանջան: Նրա բորբոսնած  
մզկիթների ու ժանտաղեմ յեկեղեցիների դիմաց բարձ-  
րանում են աշխատանքի և սոցիալիստական փառա-  
վոր «տաճարները»:

Գանձակում, կավաշար ու քարակոփ պատերի ու-  
սերից ժպտում են արնագույն նոնենիները: Նույն կար-  
մրավոռ ժպիտը բակերում, այդիներում:

Գյանջան ժպտում ե նուան կարմրավառ ծաղիկ-  
ներով:

Ուր յարական անհետացող Յեկեղեցետապուր,  
ուր մուսավաթական արնախում Գյանջան, ուր բայլ-  
շեկիկյան ստեղծագործ ու բարձրացող Գյանջան:

Նոնենիները ժպտում են: Նոնենիները կարմիր  
զրոշակի պես փողփողում են վողջ Գյանջանի վրա, իսկ  
այստեղ բանվոր դասակարգը կերտում ե նոր ու փա-  
ռավոր աշխարհը:

\* \*

Խաղողի ալգիները փոփում են Գյանջայի շուրջը,  
ուղեկցում ճանապարհի յերկանքով: Նրանք ասես  
սպորտամենների, կամ պիտներական տարածուն շար-  
քերը լինեն դաշտերում:

Խաղողի թփերն ուղեկցում են: Մեր մեքենաները  
թողնում են Գյանջան և անցնում գերմանական փոք-  
րիկ ավանի, նախկին Յելենդորֆի, այժմյան Լենին-  
գորդի միջով:

Հասարակական փորբեկ պարտեզի անհանգիստ  
շատրվանի ջրե ճառագայթների միջից, ժպտում ե հան-  
ձարել առաջնորդի կիսանդրին:

Միանման ու գեղեցիկ տները շարվել են լայն  
փողոցներից աջ ու ձախ:

Նոնենիները դարձալ ժպտում են և խաղողի տա-  
րածուն զորաբան կները պաշարել են վողջ ավանը:

Գերմանական խելք ու մտածուն դեմքեր ավա-  
նում: Տղամարդու, կնոջ, մանկան:

Մեքենաները թողնում են և Լենինգորդը:

Հաջի-Բենդ ենք զնում: Աղբեղջանի Կարմիր զի-  
վեղիալի ճամբարը:

Դարձալ վերելք ե սկսվում և ծայր են առնում  
անտառների կանաչ փեղերը:

\* \*

Հաջի-Բենդի բարձրունքում ենք: Անտառի կա-  
նաչ ծիանքն ե տարածվել շուրջը: Անտառում ու պու-  
րաներում զվիցերական տիպի ու գեղեցկության աներ:  
Ապա ճերմակ ու տարածուն վրանաքարքը:

Ռազմական հուզիչ մուզիկան զիմավորում և Հայաստանի Խորհրդային գրողներին: Վրանաքաղաքի առջ տարածվում են Կարմիր բանակային զորշ շարքերը:

Քրական բանակն անցնում և վրանաքաղաքի ձայնեծայր և վաղջանում: Խրոխուս ու հաղթական, Կարմիր բանակային պատասխան—վաղջույնն և վորոտում Հաջի-Քենդի բարձրունքներում:

Ամբողջ դիվ/զիան վոտքի մե, խրոխուս շաբքերը դոփում են: Հավաքվում են միտինդի:

Յալշիկյան անպարտելի թնդանոթները վորոտում են բարձրունքներից: Վաղջույնի վորոտներ՝ Հայաստանի Խորհրդային գրականության պատվին:

Նրանց վորոտը հուզում և ամենքիս: Վորը մեզանից այս նվիրակուն մոմենտին չեր գնա մեռնելու, այդ թնդանոթների փառավոր վորոտի հետ, հանուն մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության:

Այն վոր գարարջանումն է լեզել այն վոր հեքյութում, վոր գրողին արտպիսի պատիվ ու ընդունելություն ցուց տան:

Ո՞վ և տեսեր Ո՞վ և լսել:

Յեվ զուրչե, վոր գարժանում են մեր ընկերները: Ստկայն զարմանալու վաշինչ չկա: Ազգ թնդանոթները մեզ առում են, նրանք հավատացած են գրանում, վոր մենք Հայաստանի Խորհրդային գրողներս, առանց հանջի ու տատանման պայքարում ենք այն միենույն գրոշակի տակ, վորի տակ, այնքան խրոխորեն վորոտում են Հաջի-Քենդի թնդանոթները:

Կարմիր բանակային ծովածավալ ուսուան բացում և խանդակառ միտինդը:

Թուրք, ոռւս, հայ կարմիր բանակալիները, հրամանատարները ջերմագինորեն վողջունում են Հայաստանի Խորհրդային գրական բանակին:

Խանդավառությունը ծավալվում և թնդանոթները կարմիր բանակալինների հազարավոր բերանների:

Հետմասին վորոտում են—ուսում ։ Կեցցե ։ Լաշմալը ։

Խանդավառ բացականչությունների և ուսուաների անսպառ տարափի տակ, հանդիս և զալիս մեծանուն վիպասանը, Հայաստանի գրական պատվիրակության նախագահը—Շիրվանդապին:

Նա հայտարարում և, ի հավերժացում այս ացելությունն, Հայաստանի Խորհրդային գրողների ֆեղերացիան վերցնում և դիվիզիայի առաջին գնդի շեփությունը:

Խանդավառությունը նորից պոռթկում և հրամավում ալելի:

Նորից վաղջույնները, նորից խ սնդավառությունն նորից թնդանոթների բալշեկիկյան «ուսուաները»:

Ու մինչ որապուչ և հուզող մթնոլորտը, տակավ առ տակավ ելեքտրականանում եր, ահա կարմիր բանակային մի խումբ «դավագիրորեն» հարձակվում ե... Հայաստանի գրողների վրա և և կսում նրանց նետել գեղի վեր, ճոճել ողում, բերկության, ուրախության անհուն զգացմունքներով:

Կատարվում և զորահանդիս:

Հայաստանի գրողները շարքով կանդնած ընդունում են վողջ զիվիզիայի հանդիսավոր պարագը: Նբանց մարտական լոգունդները հրամաւում են կարմիր բանակայինների խանդավառությունը:

Մթնոլորտն ելեքտրականացած եւ:

Հաջի-Քենդի պատմական որերը:

\* \* \*

Վերագրանում ենք: Անտառների կանաչ ծփանքը՝  
լեռների կապույտ պարը, սպիտակ վրանաշխարհը մեզ  
ճամբու լեն զնում:

Վերագրանում ենք, բայց կարծես թե, վոչ կան-  
քից, վոչ իրականությունից, ալլ հեքաթից, կամ ֆան-  
տագիա—վիպի ընթերցանություններից:

Մեքենաները միրճվում են անտառի մեջ: Տպա-  
վորություններով ծանրացած զնում ենք:

## ԹԸՍԱԿԱՐԴԱՅԻՆ, ՊԱՐՏՔԸ

Մուղանի արևավառ տափաստանը կարեցինք: Շո-  
գեկառը փնչում ու վազում եւ: Մոտենում ենք վիշ-  
կաների աշխարհին, բանվոր դասակարգի անառիկ բեր-  
դեկին:

Ծովի կանաչ ծփանքը տարածվում է յերկաթու-  
ղագծից այն կողմը և խտանում, և ծավալվում:

Եյրոտթ կայարանում մեզ իջեցրին գնացքից: Ա-  
ռանց իրերի, առանց ճամբարկների: Ալեկի տակ փայլող  
ու շարք մտած մոտ մի տասնյակ ավտոմեքենաները  
բացին իրենց գաները:

Այսունոտ անցյալն ակամայորին կենդանում է  
մտքում: Այսպես, ճիշտ ալսպես: Այսպես ել մի վո-  
րեւ կայարանում իջնում ելին գնացքից: Դու ասենք  
ձանապարհորդում ես գաշնակցական չայաստանում,  
մենշեիլյան վրաստանում, կամ մուսավաթական Աղո-  
րեջանում: Իջեցնում են գնացքից և «պատվում»: Հա-  
նում են շորերդ, կոթկներդ, վերցնում ունեցվածքն և...

Ճիշտ ռայդպես ել այժմ մեզ են իջեցնում գնաց-  
քից:

Որեր: Որեր:

Ադրբեջանի կուսաժողկոմ ընկ, կուլիկը ժպտագեմ  
վողջունում եւ: Հատուկ հանձնաժողովը պաշտոնապես  
ընդունում և հունիսայն արեի այլող ոլանքների տակ  
մեքենաները վազում են:

Նորից կասպիականը յերբեմն կապույտ, յերեմն  
կանաչ, յերեմն խոժոս, յերեմն ժպտուն:

Ահա Բագուն կասպիականի շուրթերին, հպած:  
Ասես մեջքից կռացած նա լվանում է իր փոշու դեմ-  
քը:

Բագու, վիշկաների ու ծխնելույզների քաղաք:  
Պակարի ու հաղթանակների քաղաք: Բարձրականգուն  
ու ամրակուռ: Բանվօր դասակարգի շաբքերի պես:

Վաղջույն Բագվին:

\* \* \*

Մանում ենք Բագու:

Մեզ դիմավորում են արտմաների աղմուկն ու  
ծխնելույզների մուրը:

Մեքենաները բռնել են իրար պոչից և նրանց ան-  
հանգիստ ճիշերը զնում են միանալու քաղաքի համա-  
տարած, դիմամիկ համերգին:

Իջնում ենք մեքենաներից:

Ճանապարհի փողին մեր ուսերին, փոշեթաթավ  
մաղերով ու զեմքերով, հունիսայն արեից «ընծալված»  
քրտինքի փոշեզույն շիթերով զարդարուն, լարված,  
սրտատրով մոտենում ենք ծաղիկների ու վառ կանաչի  
հսկայական կուտին: Մերկանում են զլուխները և վար-

Խոնարհված հայացքներով սեղմվում ծաղկապսակների շուրջը:

Լուռ ենք առանձին—առանձին, բայց յուրաքանչյուրը խոսում է իր հետ: Մտաբերում ենք դասակարգային պալքարի պայծառ մոմենտներ և Բագվի հերոսական կոմմունայի անկումը:

Ծաղկեպսակ ենք ըերել քսանվեցին: Մեր առաջն այցը Բագվին և մեր դասակարգին:

Անմահ կոմունարներ, արեի ու ավազի մեջըը՝ կտփած մեր թանգակին ընկերներ, ձեզ ենք տալիս մեր առաջին այցելությունը, ձեր պատղամներին ենք նվիրաբերում մեր գրիչները: Ձեր կրած գրոշակի տակ կնըր վիրաբերնք մեր կյանքը: Այս ծաղկեպսակը, վոր մենք թողնում ենք ձեր գերեզմանի վրա, դու մեր դասակարգային առաջին պարտքն և: «Դասակարգային մուրհակ» ենք ստորագրում ձեզ հետ և նա մեր արյունով միայն կարող և վոչնչացվել: Այս պսակը լոկ ծաղկիներից չի խտացել, այսուղ նաև մեր սիրան և, մեր կամքը, մեր արյունը: Դրա համար վարդերն ալսքան վառ են ու մեխակները կարմիր:

Իո գեներ են անցնում և մենք լուռ զրուցում ենք քսանվեց ընկերների հետ: Մեր մտքում, մեր սրտում:

Հանդարտ ու հանդիսավոր, արծաթածուփ մազերը ծածանելով, Ալեքսանդր Շիրվանղաղեն խղում և լուռ թյունը և արդեն բարձրածախ խոսում Քսանվեցի հետ:

«Թշնամին ձեզ միայն ֆիզիքապես և սպանել առում են նա:—Զեր գաղափարներն այսոր հաղթանակել են: Աղջերի համերաշխառթյուն և սոցիալիզմի խոսուցման համար շատ բան ունեն անելու նաև Հայոստանի գրողները»:

Սրտերը սեղմվում են, սրտերը բարախում: Վար խոնաբնված հայտքով հեռանում ենք կոմմունարների շիրմաթմբից:

Մտնում ենք Բագու: Գործնական, լեռունու ստեղծագործող քաղաք: Բանվոր դասակարգի պայքարի ու աշխատանքի նվիրական գրոշակը: Ամենամեծ ծովկեպսակը Քսանվեցի գերեզմանին: Ամենափառավոր կոթողը նրանց հիշատակին:

Վողջնոյն Բագու բանվորական  
Վողջնույն ուրախ մեր առավոտ,  
Վողջնոյն արե սովետական,  
Արե անմար ու փառավոր:

## 7. Բ Յ Գ Ո Ւ

Ծովը սարսում և սեղմված քաղաքի հուժկու ըստկներում:

Գարմնները կոտրատում են ու ողի ալիքներում շաղ տալիս հնչյունները և գյումրիական ինչպոք զուանա, իր սահարիով տարածվում ու կորչում և ծովում:

Սուպաստանավերը, փոքրիկ մոտուանավերն ու մակուկները ծովալին զրսանքի կոչ են անում, գարմոնի և զուանալի միորինակ նվազով այնքան իւր լուսարկեանց անունները փռում ծովափին:—„Լյոբա“, „Մարյա“, „Առեալա“, „Պոշկին“, „Լերմոնտօվ“, „Յարյ“ և այլն:

Ծողենավերը ձշում ու ծխում են ծովափին, կորչում են ծովում, և նրանց ձիչը ծածկում և գարմոնի ու զուանալի տնդոր ձախները:

Եկեղեցան զիփուուը փշարազում և կասպիտանի իշերեսը կաճռոտում: Լուսինն արծաթում և կնծիսիները

Ծովեղըյա ելեքտրական լուսեպսակը խորանում և ծովում: Ծավալվում, զոսկեծփանք և տարածում ծովեղիք-քով: Ծովի բեկրեկուն հայելում ցոլանում և քաղաքու Ծխամու ծխնելույղներն իրենց հասակներն են զիտում ծովի կապույտ հայելում և վիշկաների զորշ շուրջպարն և բեկ-բեկվում արծաթազոն ջրերի մակերեսին:

Լուսնի շողերի տակ առագաստանավեր ու մակուցի-ներ են որորվում: Ծովը մեղմորեն սարսում և:

Լուսինը լրջելուց հոգնած, ծովի ծփուն անկո-ղինն և սուզգում:

Ջրերի կապույտը խտանում և: Աստղերի արծաթե անձրել սաստկանում: Ավելի մուզ կապառում և ծովի ու քաղաքի լուսերի վրա շրջված եմալը:

\* \* \*

Իսկ քաղաքում ուրիշ կյանք և: Բանվորական ա-կումբներում ուրախ յերեկոն և ժխորում: Պարապմունք-ներ, ժողով: Ներկայացում: Շարժապատկեր, Կարմիր թաշկինակ և ուրախ ժպիտ:

Փաղցներում նորից ելեքտրաքարշի, ավտոների ու կառքի աղմուկն և: Վիտրինների գեշերափին փակը: Մարդկային խայտարդեռ հոսանք վիտրինների առաջ, բուլվարներում, ծովափին:

Իսկ ծխնելույղները գեռ ծխում ու ձչում են վիշ-կաները՝ թոքում շնչում են: Նրանց ինչ խտացող գիշերը: Վիշկաներում նորից կաշալան ճոճում և միա-պաղպ: Ետքով նորից յերկը կուրծքն և ծակում ան-խնա: Վիշկաներում նորից քամում են հողի ալրունը, զտում ու վոսկին:

\* \* \*

Բագվում յերեկն արեստ և ու փոշեպատ: Հին Բա-գուն մոայլ և ու գորշ: Նորը՝ պայծառ ու հաղթական: Ահա հնի բեկորները—խանի պալատը, «Կուլտի» լեգեն-դար «աշտարակը»՝ քարացած հաբցականի նման ծո-վափին ցցված:

Յենում և նոր Բագուն: Բանվորական սպիտակա-փալ ավանները հարթ ու կոկիկ տարածվել են քա-ղաքի շուրջը: Արմենիքնենիք՝ Նահումյանի անվան հնկա-լական քաղաքի յե վերածվում: Նորակառուց հսկաչա-կան ստանգարտ տներ: Սպիտակ թաղամասեր: Ահա, ինքը, Շահումյանն և զիկավարում վիթխարի շինա-րությունը:

Լատինատառ ցուցանակները քեզ պոկում են մըլ-կիթի ու «ալլահի» Արևելքից: Ցուցանակների լատի-նատառ «զարդարանքն» և ծավալվել վողջ քաղաքում:

Ելեքտրական յերկաթուղին սլանում և մրկված գաշտերով: Նա սերտ կապով կապել և նավթաքաղաքը բուն քաղաքին և նրա սելսերի յերկանքով յեր-կանիվ սայլերն իրենց վերջին որերն են ճռչում: Բարձ-րանիվ սալլեր:

Վիշկաների ու ծխնելույղների գորշ աշխարհը տա-քածվել և Բագվի չորս կողմը:

Մոտիկում վիշկաների անտառը՝ հեռվում վիշ-կաների անտառը: Ապա ծխնելույղների վեհ սլացքը, քաղաքի խայտարդի փոնի վրա, վիթխարի նավթամ-քարները շուրջպար են բռնել վիշկաների այս աշխար-հում, վիշկաների շաւրջը, Սև Քաղաքում:

Ահա նավթազտիչ գործարանը: Յերկի ի սրտից

կնըդած ու զանգվածն այստեղ զտվում, զառնում է նավի, բենզին, լուզ և այլ բազմատեսակ հաղուէների դաշտուր: Հետաքրքրուն այն է, վոր այն ահազին զործար սնում, ուր սրական 50,000 փութ նավթ և զըտվում, աշխատում են վոչ ավել քան... չըս բանվոր: Մեքենաբացումն իր զլուխործոցն է տվել այստեղ: Հասնում ու անցնում ենք կապիտալիստական յերկրներին: Ծովագին ազմում է տեքստիլ գործարանը՝ 4000 բանվորներով:-

Բամբակի ծով: Ճերմակ ալիքներ ու ճառապայթներ: Կարմիր վարդեր արդ ֆոնի վրա: Ծինանդալիի վարդերի մեծութեամբ,—կարմիր թաշկինակներն են արդ՝ սպազմառ դեմքերը ալսակուր: Բանվորուհիներ—թուլու, սուս, հայ: Կարմիր վարդերի նման բացվել են որոնք բամբակի, թելի, սլացիկ փոկերի ու զարձող անիպիների ֆոնի վրա:

Ահա և տարորինակը: Ճոճնակային յերկաթ տկան-ջողերով, մատանիներով ու ապարան ջներով «բանվորուհիներ»: Երանք դեռ նոր են թողել զարեջրատների անկյունները և բուլվարների շրջմոլիկ կյանքը: Երանք կմոռանան արդ տնենը, կնետեն և կանջպերն ու մատանիները և կծուրինեն դարձող անիջների ու կարմիր վարդերի մեր զասակարգային հոսանքին:

Թողնում ենք թելի սպիտակ ջրվեժները, կարմիր վարդերի կենդանի փայլը և կասպիտականի կանաչ ու նավերանգ ծփանքը:

Ահա և հացի գործարանը՝ վերին աստիճանի առանձնատուկ ու ճատաքրքիր: Մաքրության տիպար: Լիցնում են չմաքրված ալյուրը մի ծայլից և մյուս ծայրում շարվում են փթթած ու կարմիր հացերը:

Նորից գործարաններ, նորից ծինություններ, վիշ-կաների հազթական բուրգերի, անտառների վիթխարի ու անխորտակի:

Բիբի-Հեյրաթ, Սուրախանի, Բալախանի: Բան-փոր զասակարգի պարգարի ու հազթանակի փառավոր կոթողներ, հարուստ ճատորներ:

Այստեղ, նավթի ու մրի այս աշխարհում, բրոն-զագեմ ու անխորտակ մեր զտոսկարզը հազարավոր բա-զուկներով, ժամ ոտ ժամ կերտում է մի նոր կյանքը, նոր աշխարհ: Մաքրում է բնության զեմ, քամում է ճակատի քրախնքը և պեղում հողը:

Հողից նա հանում է այն ամենը, ինչ կարևոր ե մեզ, մեր զասակարգին:

Հողից նա քամում է վոսկի ու կյանք:

## 8. «ԲՈՒԽՏԱՆ ԻԼՅԻՉԱՆ»

Այսպես և կոչվում նավթաշխարհի այն ժամը, որ կասպիտանը նաև են տվել, նրա մազիներից խոհե շամաքը և վիշկաներ են «աճեցնում» այնուհետ:

Դեռ տաօը տարի առաջ, այստեղ ծովի և տաքած-վել ու ձկների պարը: Իսկ հիմա հազթանատակ վիշ-կաներն են ծովափին, ցամաքի վրա, ջրհրում:

Ծովը նավթի բուրգով և շնչում: Ծովը լվանում է վիշկաների վառները:

Ծովի ջուրը քամում են և կաշալիան նավթ և քա-շում ծովից:

Նաևնք, յերկաթի «անսկիզը ու անվերջ» այս կողովակն ահա իշել է 518 մետր, ծակոտել հողի կործ-քը, ցեխախառն ավագ, հոգ ու քար զուրու շպրտում

Հոտոտում, վորոնում և նավթը և նրա համար ձանապարհ հարթում:

Հին մելինական պատմությանն են թողել: Անընդհատ կատարելագործում, անընդհատ առաջխաղացում: Այսպիս և պայքարում բարփի: Վրոլիստարիատը բնության դիմ: Ամերիկան վերջին մեթոդով և նավթը գուրս դալիս հողից, ծովից: Միայն այսպես կարելի է արդարացնել իլլիչի անունը: Միայն այս կերպ և կարելի նրա պատգամները կատարել:

Ֆշում և նավթահամ ծովը: Մերթ թշնամաբարի բր ալիքների հարվածներով հարձակվում և աշխատանքի այս ընթացքի ու աշտարակների վրա ու պարտված հետ նահանջում և մերթ հանդարտ ու սիրալիր շոյում նրանց պատվանդանները:

Փայտե կամրջակները կապում են վիշկաները ցամաքին: Փայտե կամրջակները զորշ ու նավթուա են: Իսկ ցամաքում ժանկակալած ու նավթածածկ ջրեր կան, ծիածանի գուշներով, ուր ուրվագծվում են վիշկաների հասակները:

Վիշկաները՝ ցամաքում, վիշկաները՝ ժանկաջրերում, վիշկաները ծովում, բանվորական ջլուտ բազուկների պես վեր բուռնցքված:

Այդ բազուկները սանձել են ծովը, հետ շըպրտել նրան, նվաճել ցամաքը: Քամում են հողի թանկադին արլունը: Ծակոտում էրկրի կուրծքը: Անխնա, անխնա:

Կերտում են նոր աշխարհ: Այդ հաղթական բազուկները,

## ՄԱՐԶԻՍ ԽԵՆՈՒՄ, ԶԱՀԱՆ ԽԵՆՈՒՄ, ՀԵՖԻԶԱ ԽԵՆՈՒՄ

Թուրք կինը չաղբալի տակ: Շարժվող պատանչի լի նմանվում նա կամ մզկիթի:

Իսկ ուր և նա հիմա:

Ծվատել և չաղբան ու շպրտել մոռացության կասպիկանը:

Այժմ նա կտավ և գործում: Այժմ նա կլանք և գործում: Քրտինք և քամում անիմիերի մոտ և նոր աշխարհ և կերտում: Նա սովորում և սովորեցնում և Բագվում հիմնել և իր ակումբ—աշխատանոցը նվաճումների հարուստ բեռով:

Ավելին:

Նա և տաղանդագոր արվեստագիտունի լի: Հաւաստանի Խորհրդային գրողների պատվին կազմակերպված էրկու էրեկոներում նա այդ աղացուցեց:

Ահա Մարգիս խանումը: Նա հանդես յեկավ թուրք դրամատուրգ Զափարլիի «Սեվիլ» պիեսի գլխավոր հերոսուհու դերում և տարավ ամբողջ գահլիճի ու մեր հիացմունքը: Այսքան վարպետորեն, հոգերանական այնպիսի մեկնաբանությունը նա տվեց իր տիպը, վորին նախանձել միայն կարող են լավագույն դերասանուհիները: Նրա քաղցրաբար ձայնը, մտածված շարժումներն ու միմիկան, բարձր տաղանդի արժանիքն իր ցուցահանում:

Զահան խանում: Զահան խանում, ինչպես, ինչպես, մոռանալ քեզ: Մելամաղձու ու նուրբ քո էրկը գեռ մինչև հիմա հնչում և մեր ականջներին:

Զահան խանումը էրկգչունի լի: Նա վոչ թե էր-

գում, այլ պոկում և իր սրտից անկրկնելի հնչուաները  
և հաղորդում: Զահան խանումն իր սիրում և քրքրում,  
իր զգացմունքները ձայնագրում:

Հաջիջա խանում: Նա մոտեցավ գաշնամուքին և  
մատները լուռ գործիքից գուրս քամեցին նվազների  
այնպիսի վեճաթյուն, վորս ունկնդիրներին ինքնա-  
մուացումով միայն հիշեցրեց իր վերջին ակլորդը:  
Հաջիջա խանումը Բեթհովեն եր կարում:

Վողջուն ակատազրված, արվեստագիտ թրքու-  
հուն:

Թուրք արվեստի նվաճումները գրսելորսով լիբ-  
կու լերեկոներից մենք գուրս լեկանք բարձր արամա-  
գրութէամբ:

Վիշկաների այս պանձալի աշխարհում, խորհր-  
դային Բագրան, տակավ առ տակավ կառուցում և ար-  
փստի ու կուլտուրայի իր վիշկաները.

## ԱՐԵՎԱՐԱԿԱՆ ՎՐԱ

Քաղաքի ամենաբարձր շենքի — «Եղիակա Յեկիրո-  
սլու» հյուրանոցի տանիքից վողջունում ենք արեամա-  
գր:

Յերկնակամարի մուկ կապույտը գնալով թալկո-  
ցագ: Աստղերն աղոստացան, կկոցեցին ու փակվեցին:  
Լուսատղը կորցըց իր փայլը:

Հորիզոնը հրավառովից: Կրակի հոկայտական մի  
շերտ բոնեց արեելքը:

Դորձարանների կապույտ ձուիր գծագրվել ոկր-  
ուց հրեղեն ալդ ֆոնի վրա:

Ծովը սարսաց: Անհանգստացավ: Վարկեգոծվեց  
տոպիականի կապույտ ու փրփռուն սավանը:

Արել հրե հոկայտական լուզորդի նման դուրս  
նետվեց ծովից: Կարմիր կրակնատիալ:

Արեի առաջին շողերի հետ մենք նախարկում  
ենք ծովի հուզված մակերեսով: Լայնաբաց առավտատը  
քամու բերանին թողած:

Դեմում՝ զարթնող Բագուն և: Ծինելույզների  
վիթխարի հասակները: Կապույտ ծուխ, ծիրանավտը  
հորիզոն:

Ելեքտրաքարշի աղմուկն արեի շողերի հետ լրց-  
նում և քաղաքը: Տարածվում ծովով ու գնում հեռու-  
ները: Սուլիչները վողջունում են արեամագը:

Արեր բարձրանում և Պալողում և ծովը: Վողջ-  
ում և Բագուն:

Վողջուն ծաղող արեին: Խորհրդալին արեին  
Բագվի վրա:

\* \* \*

Արը զնդում և Բագում:

Ասես վիշկաների ու ծինելույզների տիտանա-  
կան բանակները կանգնած չեն, ալ զնում, շարժվում,  
արշավում են և նրանց լերկաթիե զինամիկոն լցրել և  
բաղաքը, փաղոցները: Ծափալում և ծովից անդին  
Բոնում վողջ արեելքը:

1929 թ. հունիս

Վորքան գուշնեղ և հսկ ու նորի բաղխումը Ինքինականում:

Հակապատկերները վարքան զժիեղ:  
Ազնոսիդ յերգում են մուրձերը, կյանքի յերգը:  
Ազատեղ՝ փողոցում այլ յերգ և ծափալվում:  
Ազնոսիդ ենում և նոր կյանքը, մաքառում են հարվածայինների ու ենուուղիաստների բանակները, յոկ այստեղ՝ ճին գյումընցիները թաղելու յեն տանում նույնքան ճին մի գյումընցու:

Առաջից լախն վալտիկով մի յերխասարդ, պիսի վրա տանում և զալազի կափարիչը: Մահվան պես զանգաղ և քաղցւմ նա: Ապա խունացած սրբազնուն ըրն են հետեւմ ապաշաղեմ սրբերի նկարներով:  
Հետո ճինով քահանա, գունաթափ վեղարներով:  
և անհասկանալի մոմոսցներով: Ապա տիբացուներ և յեկեղեցական այլ ինվենտար: Աւոների վրա շարժվող զազողին համբարայլ ճաջորդում են գուռնաչիների մի քանի խմբեր, չգիտես մահու թի ինչուրի յերգեր նրա վագելով:

Ազսպես և թաղվում ճին գյումընցին «հին արարութ ու նամուսով»:

Իսկ մենք նույնքան «համուսով» կթագենք ճին Քյումըն, խաչալ ու խաչվառալ սրբերի պատկերներով և յեկեղեցական շնչափոր ու անշունչ ինվենտարով միասին: Մեսնող գուռնայի նվազի տակ:

Մենք այդ կանենք:

Շուտով, շատ շուտով:

Դրա համար ել մուրձերը կերտում են, Յեմենան

ամբանում և մեր քրտինքով և նոր կյանքը լիրկում և բարձր, հաղթական: Դեպովի շշակներով, տեքստիլի շշակներով և յերգում նա, բազմահազար մուրձերով և յերգում և այլ յերգի պողպատահնչուն ակորդներում մեսնում են զուռնայի նվազը, յեկեղեցական «սրբազն» ձեզեղիները, զանգակատների հուսահատ աղերուները և ճին աշխարհի խեղդվագ ու աղեխարշ ճիշը:

1930 թ.

## ՀԱՅՎԱՃԱՅԻՆ ԴԵՊՈ

Դեպոները պոեզիաներով հղի...  
Ն. Դաբաղյան

Գնում ենք ԱԵՆԻՆԱԿԱՆԻ դեպոն:

Հայտատանի Խորհրդագլխն Գրողների Փեղերացիքի բրիգադան ալցելում և մեր արդունաբերության հերթական կարևոր միջնաբերդը:

Մեզ ուղեկցում են Գյումրու ԺԵՆԻՆԱԿԱՆՅԱՆ ըսպիտակ ու սրտաբաց տների շարքերը, թաղերը:

Աչա Սկյուանի անվան յերկաթուղային ակումբի հոյակապ հաբակը:

Հատվում ե կայարանի շրջակա ծառերի ու կառնաչի շերտը և սկսում են ուղևերի զուգահեռականները: Գորշը տիրապետող ե դառնում:

Հողը հագեցված ե նավթով, մազութով: Ճպճպում ե: Բուրում ե կծու: Աբեկը ավելի յէ բորբոքում բույրը:

Մելսերի հրավարակում, նավթոտ ու մազութոտ լիաշրջան «փոսն» ե, ուր դարձնում են շոգեմեքենան և մղում ուղևերով:

Այդ «փոսն» մատ հատվում են ուղևերը:

«Բոլոր ճանապարհները տանում են դեպի Հըռովմ»:

Շրջադարձալին «փոսի» շուրջը փոված բոլոր ուղևերը տանում են դեպի:

Գնում են յերկու զույգ ուղևերի հետ:

Մեզ ժապում են հնոցների հրակարմիր բոցերը,

անիվսերի դարձը և մազութոտ ու ժպտուն դեմքերը:

Այստեղ եր կարմիր թաշկինակները:

Յեվ զարմանալի յե և տարորինակ:

Կարմիր թաշկինակները բամբակի ձերմակ ֆոնի վրա տեքստիլում հասկանալի յեն, կարմիր թաշկինակներն սովոր հյինք հանդիպել կարի, մետաքսի, ծխախոտի գործարաններում, տպարանում, կոլխոզաշտում:

Իսկ դեպոյում՝ բնավլ սպասելի չեր:

Կարմիր թաշկինակներ—յերիտասարդ կանալք, ծիրանավառ հնոցի առաջ: Մուրճահարներ:

Հիացանք: Վագնորվեցինք, պոետից սկսած մինչև գրաքննադատը: Վերջինս պատրաստ եր ներբողներ գրել կարմիր գլխաշորավոր մուրճահարներին:

Կարմիր թաշկինակներ փականագործական դազգակաների առաջ: Բոլոր բաժանմունքներում:

Ահա ազատագրված կինը, Խոհանոցի ու ընտանիքան ոչախի ստրկացնող ծխից ազատ, նա այժմ մեր սոցիալիստական շինարարության վիթխարի ոչախում, շերեփի փոխարեն, անիվսերի թափը դեկավառող մարտիկ ե:

Վոգեվորված, վոգեվորող:

Համառ մարտիկ ու կառուցող:

Դանիել Վարուժանի ու Ալեքսանդր Շատուրյանի վանիել վարուժանի թումանյանի Անուշների, վտիտ բանվորուհների, թումանյանի Անուշների, Մարոնների փոխարեն այսոր մեր կյանքում հաղթական բարձրանում ե նոր կնոջ դեմքը:

Բայց ուր ե նա մեր գրականության մեջ:

Սական մենք ասեմ:

— Իսձ ասեմ:

— Մեզ բոլորիս:

\* \* \*

Կուռակցոթիւնն իերկոմիւղացին կող-բյուրովի նախագահը մեղ ներկայացնում է բանվոր հիմնելո Պատեփին:  
Վարքան պատկառանք և աղջում նրա նարատակոն դիմքը:

Կապույտ խալաթի ոձիքի վրա ծածանվում է ձերմակ միբուռքի զրոշակը: Յերկարամե աշխատանքի ու հագնաթիւն օվկայականը:

Սակայն ինչ հոգնութիւնն մասին է խոսքը:  
Ճիշտ ե, իվանենկո Պավելն աշխատում է արդին 50 տարիա Բայց ով կարող է ասել, վոր նա հոգնել ե, վոր մազաշափ անգամ նվազել է նրա աշխատանքալին վագելությունը: Ըստհակառակին, նա ներկայումս լավագույն հարվածային ու ենտուվիասա և Յերիտասարդական ավյանով ու յեռանդով: Ղեկավարում է յերեք ստանոկ: Սովորեցնում նոր կադրերի:

Խոզբում ենք, վոր թուլատրի մեր նկարչին դժոգքելու նրա գեմքը:

— Բ ԿԴ-ՋԵ ասում ե նա փութեկոտորեն հանում է զիմարկը, ակնոցը և սանրում ծնոտի արձաթի ծոպերը:

Ուզում և ավելի յերիտասարդ յերեալ, վոր մազաշափ անգամ կասկած չլինի նրա յերիտասարդական ավյունի և խանդավառության նկատմամբ:

Նա զիտի, վոր հարվածայնութիւնն և վագելության շրջան և: Նա ծանոթ է գեղայի պատերի մհատառ պլակատներին, վորոնք ասում են.

«Ենդիմ իեղծ հարվածայնության»

«Հանուն ծափալուն սոցիալիստովին մցաւրյան»:

\* \* \*

Շողեմերենաների վերանորոգում ցեխում, յեվոն պական ախալի բանվորի արտօնքինով, հաղթանգամ բանվոր բնկ. Մերգո Խանզանը, մեզ ծանոթացնում է ցեխի աշխատանքների հետ:

Գանգառավում է ընկեր Մերգոն: Թիֆլիսից և գանգառավում: Գլխավոր արհեստանոցից:

Վերանորոգման սպասող շողեմերենաների վորոշ մասներն աշխատվում են թիֆլիսից: Բայց չետ են բարացվում ուշ՝ ձգձգութիւններով:

Ահա գծերի վրա շողեմերենաների շարքը:  
Երանք նույն այդ գծի վրա սպասում են յերկարատե ամիսներով:

Խոսք տանք իրենց շողեմերենաներին և նրանց նորոգմաներին:

### Ահա—

№ 9681 շողեմերենան մեկ տարուց ավելի սպասում է ծխատար խողովակի:

### № 97,72-ը

մեկ ու կես ամիս և սպասում:

### № 4244-ը

22 որ ե: Ահա վերջինները բարը ել ամիսների լին սպասում:

### № 4329-ը

18 որ ե: Վերջինները բարը ել ամիսների լին սպասում:

Սպասող այզ մեքենաները, բանում են տեղը և խանդաբում մյուսների վերանորոգումը:

Յեկ ընկեր Մերգոյի և մյուսների գանգառը միանգամայն իրավացի յե:

\* \*

Բանվորական ուժի հոսունությունը յերկաթուզայինների հատկանշական կողմերից մեկն եւ:

Իսկ գա վնասում եւ տեմպերին, շոգեմեքենաների ու ռելսերի հնգամյակին, սոցիալիզմի կառուցման նվաճումներին:

Այդ մասին ասել և ԱԿԲԿՌ-ն իր սեպտեմբերի 3 դիմումի մեջ:

Մենք հրահրում ենք սոցիալիստական ինքնակուստագուման միտքը:

Արձագանքում են:

Թղթի վրա ահա մազութոտ ափերի ու մատների դրոշմներ: Գրում են:

1. Ս. Խանյան.—մինչև մահս ուզում եմ աշխատել արզունաբերության մեջ:

2. Զույլիսյան.—արդեն քաշն տարի յեւ աշխատում եմ և կաշխատեմ քանի ստրախկաս չեմ գնացել Հարցը դնում եւ պարզ ու անմիջական:

Մլուները շարունակում են:

3. Յեղյան—մինչև իմ վերջը:

4. Գալսյան Մկրտիչ.—մինչև յերրորդ հնգամյակի վերջը:

5. Հովհաննես Կարապետ, —Յես խոսք եմ տալիս, զոր աշխատեմ մինչև վերջը կենինականի դեպան:

6. Գելյանովսкий Վладимиր.—работаю 5 лет в депо Ленинакана и даю слово работать до конца 10-ти летия.

Ազգես: Այս ընկերների հետ միասին, նրանց բերանով յերկաթուզու հարյուրավոր և հազարավոր

հարվածայինները խոսք են տալիս լինելու սոցիալիզմի կառուցման իրենց գիրքերում, վորպես անհանջնու տոկուն մարտիկներ:

Յեվ կլինեն:

\* \*

Կոմիերիտականները գրոհում են նավթողով ու մազութապատ խրամատներից: Շոգեմեքենաների տակը, նրանց շուրջը:

Մենք մտնում ենք նրանց ցեխը:

Ուշադրություն չեն դարձնում լեկորների վրա:

Նրանց ձգում եւ կառուցման մագնիտը: Պոկվել չեն ուղում, ավելի շուտ չեն կարող:

Ծանոթ ենք կենինականի Դեպոնի կոմսոմոլին:

Երա եներգիային, վոգեվորությանը, անսպառ յեւանդին:

Արտաժամյա աշխատանքների, շաբաթորյակների միջոցով «ի պատասխան Զեմբելինի», «ի պատասխան Զան-Կալ-Շիի» քանի-քանի շոգեմեքենաներ են նրանք կենդանացրել և նվիրել մեր սոցիալիստական հայրենիքին:

Քանի մարտական թնդանոթ սոցիալիզմի կառուցման ֆրոնտում:

Այժմ կոմսոմոլը դարձյալ գործի վրա լի:

Նրա վրոշակի վրա դրված և խոնդավորություն, յեռանդ, հաղըանակ:

Ըսկեր կոմյերիտականներ, ձեզանից չկազմակերպենք արդյոք դեպոնի ենոտուզիաստների լեզենը:

Յեկեք կազմակերպենք, լոեք պոկտին:

\* \*

Հարվածայնութիւն և վուկելության ալիքը  
բարձրացնում և արտադրանքի վսրակական և քանա-  
կական ցուցանիշները:

Դործաւքությունը, առկայն վնասում և: Աւժի հո-  
սունությունը, «թոչկոտելը» արդիքինպլանի ճեղքած-  
քներ են տալիս:

Ամբողջ ուժերով պայքարենք զբանց դեմ:

— Յեկեք պայքարենք! Անխնա: Անսպոք:

Հարվածայնությունն ավելի արագ և առաջ մը-  
ղում սոցիալիզմի կառուցման լոկոմուտիվը:

Բոլորո հարվածալին:

Հարվածային ցեխերից տնցնենք հարվածա-  
յին աբարդության:

Ամբողջ դեպոն հարվածային դարձնենք: Հար-  
վածային դեպոն:

Վորպեսզի պողպատե ուեխերով ավելի ուժգին  
ուրանան շաղիմեքենաները:

Վորպեսզի գեպոներն ավելի շատ «ծնեն».

Վորպեսզի սացիալիստական մեր մարտերում ա-  
վելի բարձր ու հազթական ծածանի գեպոյից յելած  
բայց եկկ-մարաժիկ Սեուանի աբյունով ներկած դրոշը:

Հանուն այդ գրոշի ընկեր յերկաթուղարիներ,  
դեպոնի մարտիկներ, յեկեք կազմակերպենք,  
Ենունգիտասեների լեզուներ,

Հարվածային դեպոն:

Հարվածային արդյունաբերություն:

— Ի՞նչ կանեք:

— Պատասխանեցեք պոնտին:

1930 թ. սեպտեմբեր:

## ՀԱՏԻԿԻ ՑԵՐԴԻԼ

Ա. Հ. Ա. Գ. Զ Ի

Զիոնը:

Տարածվում ու ծավալվում է: Յերեխն անջրպե-  
տում լերկնակամարի կապույտ քաթանը և լերեխն  
կորչում ձլունանման ամպերի հորձանքում:

Զիոնը:

Առավուավա նորապարթ արեի փալից տակնա-  
տում, կալծկլտում և և անորպագարձնում ծիածանի յե-  
րանդուները:

Նա կքում է վոտքերից տակ և հեծում: Յեկ դու  
քայլում ես պայծառ առավուավա, ձյունի և յերեսդ  
այրող հովի միջից:

Իջնում ես Անազչիի բարձունքներից: Ճյունե  
բլուրներով:

Բլուրներ ու լիսներ անդին՝ գաշաավայրերի ան-  
դորս և տարածուն, իսկ ավելի հեռվում՝ Հալիլական  
լեռնապարի ճերմակ թերթի ճախրանքն և կապույտ  
մշուշում: առև հսկայաթե արագիլների վիթխարի յե-  
րանի և քարացել սավաննման պահին:

Պելղաժիստ նկարիչը հովակապ կտավով կվերտ-  
դառնար Անազչիի բարձունքներից:

Իջնում ես տնընգհատ և լիսների հոկայածավալ  
շապիկը զնալով նսորտնում ու փեշերը ծվատվում են,  
ճերմակ ծվեններ թողնելով ծերպերում և ծմակներում:

Հոգը փիրացել ու ծիլերը հառնում են արևի կա-  
բոտով:

Մշուշեց յելնում են ձյունաշուշանների բաց յերկ-  
նագույն բաժակները և աչքով անում:

Սրեի հոլակապ վրձինը կանաչ և քսում բլրա-  
լանջերին և վայրեջքի հետ ավելի յե թանձրանում  
վրձինի ալդ ուրախ յերանգը:

\* \* \*

Ահազիի ձյունոտ բարձունքներից մինչե Մաս-  
տարայի «սեւ վները» ճանապարհին փոփել են Մա-  
զարջուղ և Փիրթիքյան գլուղերը:

Ամենուրեք ու հավաքում ես գյուղացիներին և  
զբուցում գալնան զլուղատնտեսական կամպանիայի  
մասին. հատիկի արգասակողման մասին:

\* \* \*

Ահազիի փողոցները մերթ տարածվում են տա-  
փարակ տանիքներով և մերթ իջնում շեշտակի վայ-  
րէջքով:

Կատարածուների առաջին խոկ ազգարարումին,  
իջնան կտուրներից և բլրակոդ փողոցներից՝ գյուղա-  
ցիները. Դպրոցն ալեկոծվեց. Նստեցին վոմանք ծա-  
լապատիկ, թաց հողին և վոմանք ծանրաբեռնեցին  
աշակերտական նստարանները:

Դու զեկուցում ես գորնանացանի նախապատ-  
րաստական աշխատանքների, մեր կուսակցութեան  
քաղաքականութեան մասին, զլուղում կատարված ու-  
խաների մասին, խոկ սասունցիական ժողովը լսում և  
քեղ մի մարդու լոռութեամբ ու լարվածությամբ:

Բայց ամեն տեղ ել գյուղացին նույն իրա-  
պաշտն եւ:

Ահազիի կոոպերատիվը մի քանի որով նոշացընել  
ե շաքարը, և անա զեկուցմանդ «թունդ» մոմենտին,  
մեկը ձեռքը ցցելով վեր և ցատկում և աղաղակում.  
Կուսոկ մի շաքար չըք տա զիմ ճժերուն, ըրբ  
իմալ կեղնի:

Դու պատասխանում ու շարունակում ես:

Յերբ խոսք ես անում կուլակի ու դաշնակի կող-  
մից տարածված պրովոկացիաների մասին, վեր և կե-  
նում մի ուրիշը և ասում:

Մընք մըր կլոխնի կախած խըտ մըր խողուն  
կխաղանք, մըզի զոչ մե պրովակաս քար չի անե:

Փիրթիքյան մշեցիական գյուղում մի գյուղացի  
ալդ նույն առիթով հայտարարեց.

Յե՛ե՛ս իմ մե ակոսն ի չըմ փոխա եգոնց խա-  
զար պրովակասու խետ:

Իսկ Գյոզլու գյուղի համայնքի ժողովում, յերբ  
զեկուցման ժամանակ խոսք բացվեց կուլակների կող-  
մից տարածված այն պրովոկացիայի մասին, իբր թե—  
«Հոսոմի պապն յեկել ու ԽՍՀՄ-ն պաշարել ե», մի  
գյուղացի ամբողջ կոկորդով ուեպլիկա նետեց.

Կրնա գա, կըոնենք ու . . . (ալսուղ հա-  
ջորդում և գյուղական ամենաթունդ, արևելյան վոճի  
հայնոյանքը):

Դու շարունակում ես:

Խոսում ես մերմի զաման, ախտահանման, հողն  
ազբով պարարտացնելու մասին, և դարձալ քեզ ընդ-  
հատում ու ակտում և խոսել մի այլ գյուղացի.

Ազր վար եղնի, չես գրա ոգուտը հարիր տարի  
իմ զուշակեր:

Աբանել առհասարակ «բառ ելության», «բառ  
կարգի» խոսում են զեկուցման քննթացքում, զեկուց-  
ման զուգրնթաց:

### ՄԱՍԻՆԻ

Մաստարան թալինի շրջանի ամենամեծ պատզն  
ի, շրջապատճած տարերավ, բլուրներավ ու բերի ցան-  
քադաշտերավ:

Այսուղից ձյունն ավելի շուտ և նահանջել, մի-  
այն նրա ճերտակ ձվենսերից զես մնացել և Փուշ  
Կոնդի ճերպելում:

Փողոցներում զարնանալին յեսուզեան և:

Գյուղացին արեկող արած զուշակում և վաղվա-  
յեպանակի, վարի ու ցանքի ժամանակի մտանի, այլի  
քննության առնում քաղաքական հարցեր:

Պատերի տակ վաղվում են վոտարոբիկ, կեղ-  
տածածկ, պորտարաց մանուկներ, — ամենատառատ  
բերքը մեր զուղում, վարն աբզանափորիում և առանց  
վարեկ կամպանիայի:

Տավարը «խամից և լինում»: Յեզներն ու զո-  
մեշները «տրտինգ են տալիս», պողաճարում:

Տավարատիրոջ սիրութ ձխում և ուրախությու-  
նից:

Փողոցներում ամենուրեք զիմում են քեզ՝ ամեն  
առանկի հարցերավ: Քաղաքից ես յեկել և զու պար-  
ասպար ես պատասխանի նրանց այդ հարցերին:

Ըսկեր զարծկում, — առում են քեզ, — աբան  
մնի պատե եղնի ես իմ հորթի բանը:

Ինկեր զատավաբ, քեզ մե խորհրդավար զազո-  
նիք մը ունեմ, — առում և մի ուրիշը քեզ առանձնա-  
ցնում և հաջանամ, վոր իւր որոր «ու կմնա», իմին  
սերմացու չուտանու:

Ահա, զանգապատճեմ ան նու շրջանացին բժշկից  
Մեկն ինձ զիմելով վրզովված առում և:

— Բժիշկն ի եկավ իմ վրեն, ին կրոնին բժիշկ  
ջան, սիրաս ի կցուվա, (ձևորը զնում և աջ ազգրի  
վերե և ցուց տալիս «սրաի տեղը»), համա նա բու-  
տեզս ի քննա (ցուց և տալիս կրծքավանդակը), և ու-  
մալ ել բժիշկ եղնի:

Մի այլ տեղ քեզ զիմում են վորովես բժշկի և  
առանձնացավի զեզ խնդրում:

Անունդ աղավազում են բազմատեսակ վարժանա-  
ներով: Ասում են մի ինչքոր բառ, միայն մեջը պահ-  
պանված լինի «զ» տառը:

### ԱՆՈՒՆԴ ԲԻԶԱ

Ամենուրեք, փողոցներում թե ողաներում, ամեն  
տեսակ խոսակցությունների տոն ավաղը, աշխուժ  
տարածալը, բոլորին սպանիչ կերպով «Ճեռք առնողը»  
հանդիսանաւմ է չքավոր զյուղացի Անուշ բիձան:

— Դու աբուսով մարդ ես, — առում և նա սի-  
սուլյանտ կոլխոզնիկի, — աբուս ի քաշա, զնա գե-  
րեզմնները:

— Իմ զաղափարն ու քու զաղափարը իրար  
չբռնին, — առում և նա մի ուրիշի, — իմ զաղափարը  
շատ ա, քուսունը պակաս:

Անուշ բիձան քննադատում և ամենատոսղ կեր-  
պով: Նրա համար նշանակություն չունի, թի ով և

քաղաքից լիկել կամ ով ինչ պաշտոնի էր: Ճակատին  
կտա առանց այլ կալության:

Հիսունից անց այս հետաքրքիր գլուղացին դեռ  
զնացք չի նստել: Անցյալ տարի նա պահանջել և  
գագործկոմի նախագահից և նստել նրա մեքենան ու  
շրջել գյուղի փողոցները, իսկ այս տարի նրա պահ  
հանջներն ավելի «լայնացել են», —

Կերթամ գործկոմ, — ասում ե նա, — կպահան-  
ջեմ, վոր իրանց ծախսով բնձի ուղարկեն Թիֆլիս,  
երթամ, մե եղ զահը ումար պոեզն ել տեսնեմ:

Յեվ կերթամ:

Իսկապես վոր անուտ բիձա:

### ԱՇՈԽԳ. ՅԵՆՈՔ ԿԱՄՍԱՐՅՅԱՆ

Ինձ մոտ բերին ու հետո ծանոթացրին Մաստա-  
րակի աշուղ Յենոք Կամսարյանին:

Նա հորինում է յերգեր ու նվագում ջութակի  
վրա: Զութակավոր աշուղ ե:

Ծանոթացնող գյուղացին, Յենոքին գովելով,  
ի միջի ալոց ասավ.

— Մեր Յենոքի գաղափարը շատ պինդ ա, հա-  
մա վախում ենք եղ սազը (ջութակը), վոր կչալա,  
դրա ձենը գաղափարն ի տանա:

Յերկար զրուցեցինք աշուղ Յենոքի հետ, իսկ  
մի քանի որ հետո նա ինձ ներկայացրեց իր «Յեր-  
գարանը», վորի յերեսին մատիտով գրված եր:

«1930 թ.

IV 5-ին

Նարարիվեց Յենոք Կամսարյանի  
յեղած բոլոր նեղինակուրյուներ»

Յերգարանի առաջին յերգն ուղղված է «Խոր-  
չըրդային Հայաստանի» խմբագրությանը, —

Մնաց թերի իմ յերգերս, «Խորհրդագին Հայաստան»,  
Շատացավ անչափ վերքերս, «Խորհրդ. Հայաստան»,  
Քեզանով պիտի լուս տեսնի, այս վերջին խնդիրս,  
Զուտ մարդարիտ են տողերս, «Խորհրդ. Հայաստան»:

Իր յերգարանի մասին նա գրում է:

Յերանի այն որը՝ կերթաս տպարան,  
Վոր կտպվիս, հետ կուգաս տեսրակս,  
Դու ման կուգաս շատ գյուղեր ու սրճարան,  
Մեծ պարզե անուն կունենաս, տեսրակու:

Անուհետեւ աշուղ Յենոքի սազը յերգեր և ձո-  
նում Լինինին, «Մաստարակի շոշին», «Մայր առվին»,  
Մաստարա գյուղին, Քյորփալուտին և բազմաթիվ ալ-  
յունութերի: Իսկ Մաստարա գյուղի կոլխոզի մասին նա  
յերգում է:

Լսեք տահմ իսկականից,  
Մաստարայի կոլեկտիվը:  
Հասկացող ե ամեն բանից,  
Մաստարայի կոլեկտիվը:

Ունի շարքացան մեքենա,  
Վորը զարմանալի բան ա,  
Առանց ի ձեռքի ցանք կանա,  
Մաստարայի կոլեկտիվը:

Կեցցե իշխանությունը  
Վոր ավեց ազատությունը,  
Գտավ իր փրկությունը,  
Մաստարայի կոլեկտիվը:

Յենոքն և կամսարական,  
Արժան և գովզն խակական,  
Վոր տալիս և Եշխանության  
Մաստարակի կունկտիվը:

Սոցիական մատիֆսերից հետո աշուղ Յենոքը  
տեղ է տալիս նաև սիրային իր տապերին.

Միաք եմ բերում շքեղաղարդ պատկերդ,  
Յերկնալին աղեղնակ, կամար ունքերդ  
Վուկուց ձուլած քառասուն քիսակներդ,  
Արժան և, վոր ըմպեմ թուլնը, սիրուհի:  
Կորուցել եմ քեզի նման սիրունը,  
Ամ ևմ անում, սրտես կուզա արունը,  
Յերը պիտի զա գեղեցիկ վառ զարունը,  
Դու լինես վարզ, իսկ յես մեղու, սիրուհի:

Թե վոր սարանք տավին, — ասում է աշուղ Յե-  
նոքը: — Եւս շատ բաներ կհանեմ, ինչքան ամես կա-  
րում հանեմ, մենակ թե տավին: — և նա թախանձա-  
գին խնդրեց ինձ, վոր մտածեմ իր յերգերի տար-  
պիճան մասին:

### Գ Ի Շ Ե Ր Բ

Մութը զնալով ափելի յե խառնում: Քիշերը նըս-  
տում է ծանր ու տարածում:

Լեռների ճերմակ կապարներից-կատար հանգ-  
չում է մուզ կապույտ լերկնակամարը: Վագավոր ու  
հոկայական բասամփոփի նման:

Աստղերի հույլերը կիոցում են աշքերը: Ճըլվը-  
լում: Աստղերի հուլերը լերզում են: Զուլու ու խա-  
ղաղ գիշերվա յերգը:

Մոր է սավառնում Արագածի զրզուն հովի:  
Յերզում է նա յիշ նորարաց ձաղիկների և ծիլ առնող  
կանաչի յերզը:

Բայց լիկայն զարնան յերգը:  
Խորհրդային սուեգծագործ համերգն է ալիքիում:  
Յերկիլը, նորագալդ արկի տակ և գիշերվա ցուրտ  
շնչում:

Գիշերին է հստել համբ ու տարածուն:

Փուշ կոնդի, Պուրուղ Դարի և Նախիկայամացի  
բազուկներում տարածվուծ, քուն և մտել Մաստարա  
ցյուղը:

Մարում են աղոտ ձրագներն իրար լեռնից:  
Ճրառում են վերջին զաները: Հում վերջին ձայները  
և անհետանում վերջին քալերի թուլ արձագանք-  
ները:

Մի զույգ պատուհան գեռ շաղում են գիշերվա  
միտում: Մի լամազ զես հեկեկում է: Մի քանի, քնարը  
գլուխներ զես հակված են սեղանի վրա, լամազի  
շուրջը:

Իսկ սեպակը ճերմակ պատեր ունի և տախառ-  
կամած հատակ: Յեկակի տունը գլուղում:

Ազատիդ, այս նույն սինդակում, զուցի և միհ-  
նույն սեղանի ասած, լերենինի քյոխան իր մարակի  
ու սարկացման հաշեմերն և կազմել: Այստեղ, այս  
նույն սեպակում տաճկական փաշան իր արյունուա-  
ծրագիրն և պատրաստել, այսուեղ սնունդ են առել  
զաշնակցական խմբապետների շահատակություննե-  
րը: Այստեղ զեկագարության մասն և ունեցել մինչ

անգամ խորշումագարդ պառակ Մուլիստար Սուլթանը  
իսկ այժմ այս նույն սենյակում դարձյալ լամպը վառ  
է և նրա շուրջը հավաքված լավագույն ակտիվը վըճ-  
ռում և հատիկի բաղդը Ասես ճակատագրական ռազ-  
մացակատի չտաբն և այս, ուր հավաքված բանակի  
հրամանաբարները, տարածուն քարտեղի վրա վըճ-  
ռում են մարտի ընթացքը:

Ճիշտ այդպիս:

Այդ քարտեղը սակայն, գյուղհամայնքի ցու-  
ցակն և, փորի վրա ծանրացել են բոլոր գլուխները:

Գյուղխորհրդի նախագահն և, բջիջի քարտուղա-  
րը, կոլխողի նախագահը և գյուղական ակտիվը:

Քննում են անձեռնմխելի սերմֆոնդի բաշխման  
հարցը: Գիճում ու ատքանում են: Սակարկում են  
հատիկ առ հատիկ: Տնողինում լուրաքանչյուր հատի-  
կի արգասավորման բաղդը: Կերտում են հատիկի նը-  
գիրական յերգը:

Կարգում են գյուղհամայնքի լուրաքանչյուր  
անտեսատերի անունը, լավ տնտղում, ապա վորոշում  
նրան տրված սերմացաւի քանակը:

Կարգում ու քննում են անուններ: Ահա անց-  
նում են նրանց աշքի առաջակ - Խոն Վեիկազ Գեվոն,  
Բնեցմավ Սարգիսը, Սիմիկյան Ռուզար, Մոսկովը, Խըզ-  
զոյ Յերվանդը, Հովիքը, Գովինդի Տիգրանը, Քորոգի Յեփոն,  
Սեփումուրան Հակոբը, Քարե Գայլինը, Գրու-  
գագիրմանցի Գեվորը, Գրլ, Գալ Ալեքսանը, Շարաֆի Խա-  
չյոն, Փալեվան Նիկոլը, Մայլի Արուրը և այսպիս անվերջ:

Վեճը տաքանում և լուրաքանչյուր անունից հե-  
տո և նրանց քնարք կեմքերի վրա ծանրանում հոգ-  
հուծությունը:

Այդ տպավորիչ դեմքերից, սակայն, այս տողերը  
գրի առնողի մտապատկեցում պայծառորեն ու անջըն-  
ջելի կերպով քանդակվեցին մեկի դիմագծերը, տիրա-  
պետեց մեկը —

Հ Ա Յ Ա Յ Ա Յ :

Նա նոր և վերադարձել բանակից: Հեծյալ գնդից  
բերել և կարմիր մի զիսարկ և հսդիեյան թուջի մի  
աստղ: Սակայն նա հեծյալ գնդից բերել և տոկունու-  
թյուն, անսպառ լեռանդ, լրջություն և բալլեիկյան  
տակտ:

Նա զեկավարում և խոշոր այս գյուղի իորդուրդը:  
Զի քնում համարյա: Զի հանգստանում: Ճաշում և  
արդուք: Ո՞վ գիտի: Բայց նա զեկավարում և գյուղը  
և լավ և զեկավարում, — այդ բոլորը գիտեն: Նա աշ-  
խատավոր գյուղացիության մեջ սուեղել և համա-  
կրանքի լայնածավալը ծով և այդ ծովում զեկավարում  
և աներեր՝ գյուղի խորհրդի նավը:

— Սիրելի Հայկազ իս իերեք չեմ մոռանա  
քեզ: Դու գյուղական կոմունիստի տիպարն ես և մեր  
քեզ: Դու գյուղական կոմունիստի տիպարն ես և մեր  
քեզը իուղունուրդների իդեալական նախագանք: Զիմ մո-  
գյուղացիուրդների իդեալական նախագանք: Զիմ մո-  
գյուղացիուրդների իդեալական նախագանք: Զիմ մո-  
գյուղացիուրդների իդեալական նախագանք: Զիմ մո-

գյուղացիուրդների իդեալական նախագանք: Զիմ մո-  
գյուղացիուրդների իդեալական նախագանք: Զիմ մո-

գյուղացիուրդների իդեալական նախագանք:

և մի այլ լերպ և արձագանքում ու մարտում դանդաւղիքնեն:

Մեկը ծոր և տալիս ջերմությամբ.—

Յեկել և նորը,

Խնդության որը,

Գյոզալ տրակորը, ջմն...

Հավանարար կոլխոզի պահապանն և նա մեռակ չեն: Չորսական հոգի ամեն զիշերը հոկում են կոլխոզի պահանատների, գոմիքի և ունեցվածքի վրա:

### ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԸՆ

Նրանց սեղանի վրա ծանրացել և դիմումների շեղը: Ֆրել են ամենքը: Ամեն ընտանիք, մի քանի անգամ նույնիսկ: Իրապաշտ գյուղացին գարձել էրապարակ և իջել: Պահանջում են բորբը: Ունեցող և չունեցող: Գրել են թղթերի փաթթիկ կաորների վրա և վորքան առև հետաքրքիր:

Ահա,—

«Թիմոմ Ռուզիս Հակոբյանից

Սրանով գալիս եմ ձեզ հայունելու, վոր հիշալս բաղկացած եմ 3 անձից աշխատավոր եմ միուս գլուզ քո: Ինձ արել և չկավոր: Բայց ներկայումս վաշ մի հացահատիկ չափան ուստի խնդր վում եմ զուխ իս: Վոր ինձ տալ վեց փությ ցորենու:

Երել Վարդանյանն իր դիմումի մեջ պատճ եւ:—

«Եւ ակատի ունենալով վոր ես բաղկացած եմ 6 անձից անահատովես չկավոր բայց զազիս մաշտապով թուլ միջակ եմ հիշում ինսդրում եմ

գուղ խորողին որ ինձ տալ սերմացու 12 փությ ցորեն ցանելու: Խնդրում եմ գուղ խորողին որ չի մեռնել և բավարարել իմ պահանձը, ինչ որ պահանձում եմ»:

Յեկ շարունակվում և այսպիս անվերջ: Ահա դարձար—

«Մատարա զուխ խորենդին  
Նույն զուխի բնակիչ Պարզեվ Մուհայանից  
Գ. Ի. Մ. Ռ. Ո. Ի. Մ.

Ի նկատի ունենալով այն պարզ պատճառը վոր ես բախկացած եմ 5 անձից և անտեսապիս չկավոր եմ և չունիմ գարնանացանի վոչ մի սերմացու և յես Մովսեսիանցս ունեմ սբրարացած փափուք հողամաս և չունիմ սերմացու ուստի մոտ և ցանքի ժամանակը և յես ստիպած եմ հողամասը թողնելու ան արդունքի չունելու՝ գիրքում և այլն:

Այսպիս գիմումների շեղը ծալ-ծալ ծանրանում և սեղանին, իսկ նրա շուրջը հավաքված ակտիվը վճռում և հատիկի բազը: Գիշեր: Յերեկ: Ժամեր ու որեր անբնդհատ:

\*\*\*

Կենդանանում և բողոքների ու դժուռությունների տարափը: Ամեն մեկն սիր կողմին և տոշում: Ամեն մեկն իրն և տառմ:

Արա ես անձինախիկին ֆուզից մեզ փայ չկայ ես իմադ եւ:

Խնդիրը լավ է երկու թքով չեք քննե՛:  
Ենձի սերմ որ չավիք, իմ արտը կմնա բա-  
յակա:

Թե յես տանս ի սերմ ունեմ, ապացույցեք,  
թքուցեք երեսս ի:

Հմենուն տվիք, ինձ լե տվեք:

Յեվ այսպես անվիրջ:

Բողոքի լե լեկել նաև ինքը,—

### ՄՈՒԽՏԱՐ ՍՈՒԼԹԱՆԻ

Դուան մեջ լերմում ե նրա հողագույն և կնճիռ-  
ներով ակոսուն դեմքը:

Տաճկական տիրապետության ժամանակ (1918թ.)  
այդ պառակ կինն արժանացել ե փաշալի «վոյորմա-  
ծութիւնը» և նշանակվել զյուղի մուխտար (գալավա):  
Տարածել ե իր ճաշումն ու սիրագործությունները  
վողջ զյուղով: Յեվ ի վարձատրություն իր պաշտոնի  
փաշալին հատուցել ե սեռական հաճույք, զյուղի  
դժբաղը աղջիկների տանջանքի գնով:

Մուխտար Սուլթանն այժմ սերմացու յե պահան-  
ջում: Նա մենակ ե, բայց ամենից շատ և ուզում  
ստանալ նախ խնդրում ե հանդիսա և շոյող տոնով:

Ապա վրդովմունքի հեղեղով: «Արդարություն» և  
պահանջում: «Յես աշխարհի գիտունն եմ», — ասում է նա:  
Սպառնում ե թալին զնալ բողոքի: Ապա հայոցում և  
տղամարդկային ռազմախով ու հեռանում, տանելով  
իր նողեղալի դեմքը:

Ո՞վ կհավատա քեզ, տիրահոչակ պառավ,  
Մուխտար Սուլթան:

### ԿՈՂԵԿՏԻՎ ՀՈՒԱԶԱՓԸ

Բայց միթե սրանով վերջացան գյուղի ակտիվի  
գիշերալին հավաքույթները, զոչ նրանք զեռ նոր են  
սկսվում:

Գյուղը լերկար սպասեց հողաչափի, իսկ նոր չե-  
կագ ու չեկագ: Իսկ զարոներ բոթում ե կողերց: Հողը  
կանչում է:

Սակայն ով պիտի վերապաստվորի հողերը, կո-  
լեկտիվինը անջատի: Անհատականները բաժանի ճշշ-  
տությամբ: Ո՞վ պիտի լինի հողաչափը:

Ահա յես գարձալ գիտում եմ համաս այդ խըն-  
րակին, կոլեկտիվ հողաչափին: Նույն ակտիվին, վո-  
րը հատիկից հետո այժմ հողի բաղդա և վճռում:  
Փուկել ե սեղանին խունացած ու քրքրված թերթի բով  
հողամայանը ու նրա վրա հակվել են նույն զլո նո-  
ները: Այստեղ սակալն, նրանց ոգնության են լեկել  
ավելի տարիքու ու փորձված զյուղացիները, նաև  
հողաչափության «մասնագետ» ծացուն:

Դարձալ զիշերներ և ցիշեկներ անընդհատ  
նրանք գամկել են միկույն սեղանի շուրջը և հակվել  
միկույն խունացած թերթերի վրա:

Հարգանքով եմ արձանագրում զյուղի անանուն  
այս հերոսների մոսին, աննկուն այս մարտիկների  
մասին, վորոնց թելազրանքով ու կամքով վաղը հողը  
կփխրանա ու կուռածանա ակոս առ ակոս: Հատիկները  
կերպեն ու կսփռվեն: Կիմաստավորեն հողը:

Փուշ կոնդի, Պուկուզ դարի և Նիւավկայամաջի  
թերում տարածված «թերակղղին» կալեկոծվի կա-

նաշ ծփանրուի, ապա կոսկեզածի ու կհասունանա և  
բացեմիկան գարնանացանը կորակի հաղթանակով:  
Ամելի աժգին կհնչի հատիկի մարտական  
յերգու:

Պատարա Յերեմիա:

1930 թ. մարտ.

## ՎՈՍԿԱՒՆ ՀՅՏԻԿՆԵՐԻ ՈՒ ԱՐԺԱԹՅԱ ԳԸՆԴՈՒԲՆԵՐԻ ՄԸՍԻՆ

ՓՈՃՈՒ ՅԵԼ ԱՐԵՎՈՒ ՄԻՋՈՎ

Անիվարը թաղվում են փոշու հաստ շերտում  
ու դառնում, Արմակները դոփում են: Փոշին հորդում,  
վարարում ե: Ամպանման զանգվածով բռնում ճանաւ  
պարհը:

Մերձակա այգիները, խողողի վորթերը, թաղ-  
ված են փոշու հաստ շերտում: Կանաչ տերեները, ու  
խոտաշար վողկույզները ձերմակել են: Խողողի տերե-  
ների աֆերը ծանրացել են փոշու բեսի տակ:

Ճանապարհի լերկայնքով ընթացող մասրենիները  
հազիվ են պահպանում իրենց կարմիր յերանգը:

Տեղ-տեղ վոլորվում են Գլուռնի-չայի գալարուն  
գոտիները, վորոնք մերթ արեի շողերի տակ փայլա-  
տակում են և մերթ մշուշվում փառու հորդուն հոսան-  
քում:

Նիզակում ե ամռավերջին արել: Արարատյան  
գաշտի գաղագուն արել: Ծակում ծոծրակդ, մեջքդ:

Անիվը գառնում ե փոշում: Ամրակները դոփում  
են: Ձերմակ մազերով ու դեմքով մտնում ենք գլուղ:

ՅԵՐԿԱԹԵ «ԿԱՆՖԵՏԼԵ»

Նորաշենի կոլխոզի գրասենյակում խոսում ենք  
գյուղացիների հետ:  
Կոլխոզիները խոսակցության մեջ անգամ ցան-

Արագան, Վերելքով—4:

կանում են «հասնել ու անցնել»։ Մեկը մէռուի բերանից խոսքը կարելով պատմում են։ Յեվ այդ խոսակցություններից պարզվում է, վոր կոլխոզն իրեն տըգած պլանները կատարում ե հաջողությամբ։ Այս տարի 86 անտեսություն միացրած այդ կոլխոզը ցանել և 30 հեկտար ցորեն, 4 հեկտար գարի և 17 հեկտար բամբակ։ Աշխանացանի համար արգեն վարել են 25 հեկտար տարածություն։ Սակայն կոլխոզն իր աշխատանքային գիտակալինայով, կազմակերպվածությամբ այնքան ել պարձենալու առիթ չունի։

Բամբակը ցորենով վորհարիներու տրամադրությունը գեռ իրեման և գալիս նույնիսկ մի շարք կոլխոզնիների մոտ և ահա նրանցից մեկը ի պաշտպանություն ցորենի ասում է։

— Յես շեշտես հմ, վոր մեր խոզը պամպայկ չի սիրես ի։

Սակայն բոլոր գլուղացիների կողմից անխսիր սեր և նկատվում գեպի տրակտորը։ Նրանք արդեն հաշվել են, վոր արակարի վարը 5—6 անգամ իրենց եժան և նստում և այժմ պահանջում են, վոր կառավարությունը արակար շատ բերի։

Վոչ կոլխոզնիկ գլուղացի Սարգսը, աչքն իր կատարածուական պղնձե «շքանշանից» կորելով, մեղս տոնով ասում է։

— Հերք, վոր տղին կանֆերատ տասի իշղար քաղցը երեփաս ի, մեղ խամար ել տրակտորն ենդար քաղցը իւ

Ստուգելով իր պատկերավոր խոսակցության գործար տպագործությունը, նա շարունակում է։

— Մենք խնդրես ենք, վոր տրակտորը պամպայից զատ ցորենի տեղն ել վարես եր։

\* \* \*

Առավոտայան գլուղբջիջի քարտուղարը մեղ ուղեկցեց և ցուց տվեց կոլխոզի այգիներն ու բամբակի արտերը։

Խաղողի թփերը վոչխարների հոկալական հոտերի նման թափալել ու բռնել են հոկալական տարածություններ։

Յուրաքանչյուր թուփ, յուրաքանչյուր վորթ բեռնավորվել և չափից ավելի։ Յուրաքանչյուր վողկույզ հագեցած և Արարատան գաղտի արևովի Գլանի-չափ ջրով։ Ուռճացել, ծանրացել ե։

Ու մրգի գերազանց առատության ալս տարվաբերքը ծանրացել և խաղողի վորթերից, գեղձի ծառեսից և իջել փշատենիների խոնարհուն ձկուղերից վար։

### ԶԵՄՐԵՐ

Սակայն վողջ կոլխոզը մտատանջության մեջ և նրա աշխատող ձեռքերը չեն բավականացնում։ Կուղովի գերազանց առատ բերքը հավաքող չկա։ — «Վախենաս ենք ձան տակ մնա» — ասում և մեր ուղեկիցը։ Չեն բավականացնում նաև փոխադրական միջոցները։ Սայերը քիչ են։

Արտաշատում մի ընկեր ձիշտ կերպով նկատեց, վոր լիթի իրենց շեֆերը մասսայտկան ողնություն, շարաթորյակներ կազմակերպեն, ճնարավոր կլինի հավաքել կոլխոզի բերքը։ Միանգամայն ձիշտ և խելացի առաջարկ։ Սակայն ուր են շեֆերը։ Հենց Արտաշատի շեֆը — Հայրամբակը։ Յերկու տարի լի, վոր նրա հետքը կորցրել են։

Շեփեր, սպասարկութիւնն դրեք ձեր ձեռքերը,  
ոգնեցեք կոլխողներին: Ծանրացած ու վոսկուն վոր-  
կուլիները կանչում են:

\* \*

Խաղողի այգիների արանքում, նրանց շուրջը, տա-  
րածվում են բամբակի արտերը: Շարքացանի տված  
ընթացքով շարվիլ են տունկերը: Պիռներական շար-  
քերը չեն արդյոք, հերմակ բլուզներով: Ռւրախուկին-  
սունակ: Արևի ջերմ փայտականի ներքո:

Նորաշենի բամբակի ֆըռնառում, տարածութիւնն  
առաջնութիւնը խել ե կոլխողը: Սակայն անհատական  
անտեսութիւննը վորակով հետ ե թողել նրան:

— Հնկեր կոլխողնիկներ, ինչ կասեք: Պէտք ե  
«համենել և անցնել» թե վնչ:

Ցուց տվեք այդ: Գործով:

Բամբակն ել ձեռքեր ե ուզում ու նրանք չեն բա-  
վականանում:

— Ձեռքեր,

— Ձեռքեր:

ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՇԵՍ ԹԱԳԱՎՈՐԻ ՈՒ  
ԿՈԼԽՈԶԻ ՄԻՋԵՎ

Արտաշատի կոլխողի անդամ ընկ. Հովհաննեսը  
մեզ քաշ տվեց կոլխողի բոլոր արտերով ու այգիներով:

Այստեղ բամբակն ավելի հաղթական ե: Ավելի  
բարձր են թփերի հասակները և արծաթյա գանգուր-  
ներն ավելի բարն սփորված: Այստեղ կոլխողը վերցրել  
ե առաջնութիւնը նաև վորակի ասպարիզում ու այն  
իր ձեռքումն ել կպահի:

Արտաշես թագավորի ամբողների վերջին բեկոր-

ների շուրջը ու բածվել են կոլխողի արտերն ու այգի-  
ները: Ցերբեմն արծաթյա գանգուրների ծփանքը, յեր-  
բեմն վոսկուն ու սեամած վողկույզների բուճցքնե-  
րը, և լերբեմն սեահողի աշնանալին հերկերի հարթ տա-  
րածությունները:

Ծակող արևի տակ աշխատանքը լեռում ե: Կոլ-  
խողի արտում: Անհատականի հողի վրա: Ամենուրեք:

Ն Ո Բ Ա Շ Ա Տ

**Արտաշատից քիչ հեռու կառուցվում ե նոր գյուղ:**  
**Նորաշատ:**

Արդեն մի շարք տներ կանգնել են:

Տները, սակայն հեռու լին քաշվել իրարից: Նրանք  
կառուցվել են անհատական ինքնամփոփ տնտեսութիւնն  
սոցիալական պատվերով:

— Կոլեկտիվիզմը ժւր ե, հարգելի ճարտարապետ:

Զարմանքով ես մանում գյուղական այս տները:  
Մեծ-մեծ ու տպակեպատ պատռւաններ, սպիտակ պա-  
տերով սենյակներ: Ցել ով զարմանք, չկա թոնիրը:  
Հայկական գլուղից քշել են այդ նահապետական պա-  
ռավին: Կերակուրի համար ազմկում են պրիմուսները,  
իսկ հացը պետք ե թխվի նոր կառուցվող վուում: Մե-  
զանի վրա ատամի փոշի, խոզանակ և ալն,

— Ազատազբաժն գեղջկունուն վողջույն:

Ն Ո Բ Ի Ւ Ա

Նրան հանդիպեցի Զոհարլուի զուղիսը հրդի գրա-  
սենյակում:

Արեք փոխել եք նբա դեմքի ու մօրթի գուշնը,  
սեացրեք նույն փոշին և նբա մազերին եք: Գյուղատն-  
տեսական ինստիտուտի վերջին կուրսի ուսանողուհին

վեցերորդ ամիսն ե, ինչ չափում ե դաշտերը և աշխատում զբուղի սոցիալիստական վերակառուցման համար:

Այժմ նա գյուղխորհրդից ուղեկցողներ ե խնդրում բամբակի արտերը հետազոտելու համար:

Գյուղխորհրդի անդամները հրաժարվում են կետորդա սաստիկ շագին դաշտ գնալ: Իսկ կուիզան համառում ե: Նա չի վախենում արևից ու տապից: Պետք ե շուտ վերջացնի և գնա հարեան գյուղերը:

Նրա կանացիությունն եր գուցե պատճառը, վորպոկվում են, խորհրդի անշարժ անդամներն, և գնում են դաշտ:

\* \* \*

Առավոտան դարձալ հանդիպեցի կուիզային: Կազում եր, կոշիկներն արնոտ ենին:

Առանձներում սեղմելով ցալը նա պատմեց այն մասին, վոր շունը նույն առավոտյան, խածել ե վոտքը: Ամուր խրվել են ժանիքները նրա մարմնում և ալժմ ի գիտություն առողջապահական որգանների, պիտք ե ասել վոր յոդ անգամ չկա վերքի վրա քսելու համար:

Ենիլ կուիզան քայլեց վեց վերստ, վիրավոր վոտքով, մինչև Դամարլուկի բուժկայանը:

Ինչքան կուիզաներ, սոցիալիստական գյուղի ենտուղիաստներ, այժմ՝ քայլում են մեր դաշտերըւմ, արեի ու փոշու միջով, առանց հոգներու և անվեհերորդներ պայքարում են գյուղի վերակառուցման ֆրոնտում:

«ՄԱՅԻՍ ՄԵԿԻ ԿՈԼԵԿՑԻՎԸ ՊԱՏՐԱՍՏ Ե»

Զոհրաբլուլի, Մեհրաբլուլի, Գետաշենի, Ազատավանի, և Յամանջալույի գյուղացիները հավաքվել են Զոհրաբլու գյուղի Անաստվածների ակումբ՝ ժողովի:

Որակարգում դրված է նաև «Հնդամյակլը, չորստարում» փոխառությանն ոժանդակելու հարցը:

Ղամարլույի շրջանի համարյա բոլոր գյուղերում մասսայական վոգեորություն և սկսվել փոխառությանն ոժանդակելու շուրջը:

Ամենուրեք շաբաթորյակներ և կիրակորյակներ են կազմակերպվում դեպի դոերի վառողման աշխատանքների վայրերը: Բանվորների որական աշխատավարձը 3 ուռելի յե: Սակայն գյուղացիների մեծ մասը հարցածայնության կարգով, որվա ընթացքում կատարում են 5 ուռելու աշխատանք:

Ցեվ հարցուրավոր 5 ուռելիանոցները գնում են ուժեղացնելու սոցիալիզմի կառուցման, ինդուստրացման վիթխարի գործը, ամրացնելու «հնդամյակլը չորստարում» փոխառության հիմքերը:

Ահա շրջանից յեկած զեկուցողն այդ մասին և խոսում և նույն ժաղանքում բուռն վոգեորության տակ յելնում և մի լերիտասարդ, վճռական ու հաստատուն տոնով հայտարարում ե՝

— «Մայիս մեկի» կոլեկտիվն իր ամբողջ կազմով պատրաստ ե շաբաթորյակն գնալու:

Ծափերի տարափը ծածկում ե նրա հայտարարությունը և ապա՝ կոմյերիտ միության ներկայացուցիչը: —

— Կոմսոմոլի բջիջը նմանապես հարյուր տռկոսով պատրաստ ա:

Կոմիջիջը նույնպես ամբողջովին պատրաստ ա:  
Ապա դարձալ նույն ծափերի տարափի տակ  
սկսում և անհատական գլուղացին:

— Գրի Գհղում Յոլչան: Պատրաստ իմ:

Ծափեր:

— Շահքաղյան Մուշեղ:

Ծափեր:

— Ալեքսան Առաքելյան: Պատ... Ծափեր:

Ցեվ այսպես շարունակվում եւ

Գյուղիսորհրդի քարտուղարը գրի յեւ առնում շա-  
րաթորբակավորների ազգանունները:

\* \* \*

Գիշերվա նույն ժամին գյուղի փողոցներում յեւ-  
առւզես և աղմուկ եւ

Խմբեր են անցնում: Հարեան գյուղացիներն են: Խմբերով գնում են զոերի վարչություն, այնտեղ հան-  
գոտանալու և առավատ վաղ, վորը քրիստոնեական կի-  
րակի յեւ, ամբողջ ուժով նվիրվելու սոցիալիստական  
շինարարությության գործին:

Գնում են կարմիր գրոշի առաջնորդությամբ,  
թառի թրթիսների, լերդի ու պարի ուղեկցութէամբ:  
Լուսնի լույսով վաղողված դաշտերով ու փողոցներով:  
Գնում են խանդակառությամբ, ու աղմուկով, խան-  
դակարելով Գյառնի-Զայի ջրերում ննջած սագերի գիշե-  
րալին հանգիստը:

1920 թ. սգոստս

## ՄԱՐՏԻԿՆԵՐ ՊՊ.ՆՉԲ ՓՐՈՒՏՈՒՄ

Ա.

Թայլում ենք լսու ձորով —  
ուր հանգեցն կաց  
Ժայռերը խարունել նոթերը կիտած՝  
Գիմ ու գետ կանգնած, համառ ու անթարթ  
Հայացքով իրար նայում են հանգարու:

Առավատան մշուշը և Մանեսի ձուլարանի կապ-  
տախիտ ծուխը միախառնվելով լցրել են ձորը ու  
կիսաթափանցիկ քողով պատուել լեսների հաղթական  
հաստեները:

Ազելի հեռվում, լեռնակատարների մոտ, ու յեր-  
կանկամարն անջրպիտող ատամնավոր բարձրունքնե-  
րում մշուշը բաց կաթնագունի յեւ վիրածվում, հալում  
անհետանում:

Սողում են յերկաթուղագծերի փայլուն ու վոլ-  
ուսն զուգահեռները ու Մանահինենի կորամեջք կամուրջը  
կքել և նրա կողքին դարերի փոշոտ պատմությունը  
և քարակոփ առյուծարաշերն ուսւերին:

Պատմությունը հայ միծատան, իշխանի, կղերի  
վորոնք Դեվ-Բեղի մեջքին կամարել են ժամանակի  
ճարտարապետության ալու կոթողը և ժայռերի ուսի-  
րին կանգնեցրել սարկացնող իրենց բերդերը, վան-  
քերը, զանգակատները, խաչարձանները:

Իսկ այժմ կարմրակը ձուլարանի կամուրէտ

ծուխը լիզում և պատմության կոթողների բեկորները  
և տարածվում,

Ուրիշ պատմության, պիելի վեհ, վիթխարի կո-  
թողներն են կանգնում.

Այս լոռու ձորն եւ:

Բ.

Ալլահիերդու շրջանալիին միության և լեռնագործ-  
ների տեղկոմի գրասենյալների գոները դրսից «զար-  
դարված» են: Աջից և ձախից տախտակներ-կարմիր և  
սև ներկած: Մշտական ջնջումներից մնացած կավիճի  
ճերմակ հետքերը խաթարել են տախտակների հիմա-  
կան գույնի պալճառությունը:

Անտեղ մենք կարդում ենք սոցիալիզմի կա-  
ռուցման համար մզկող մարտիկների գնահատական-  
ները: Մերթ վոգերող, մերթ վրդովեցնող! Այդ գը-  
նահատականները գրված են անփույթ հայերենով,  
դժվարընթեռնելի, բայց նրանք ավելի քան բովան-  
դակալից են:

Ահա սի փոքր ծանոթանանք:—

«Վորայիս կարմիր մետաղ մի որվա մեջ հայաքել և  
150 փուր գրվում է կարմիր տախտակին Հովհաննես  
Մարքարյան»:

Յել դրա կողքին անմիջապես:—

«Հմայակ Սարգիսյան գրվում է սել տախտակին  
վորայիս բերքանավանման յել ինդուստրացման ա-  
խտանիներից խուսափող»:

Ապա հայորդ տախտակն է պատմում նորեկին, թե—  
«Վերին տանսպորտը արժանի յի կարմիր տախտա-  
կին վոր աշխատանից նետ և ժամ աշխատել է  
հանքը պեչքում չպահելու համար:

1. Ն. Անտալյան, 2. Գ. Վարոսյան, 3. Զ. Վար-  
դանյան, 4. Ա. Անքառանիյան, 5. Ա. Մայիսյան  
6. Ա. Գևորգյան».

Ցեվ կոնտրաստը:—

«Գրվում են սել տախտակին

1. Սահակյան Քրիզորը, 2. Վարդանյան՝ Ավագ  
գործից ուշանալու պրոգրամի պահանով»:

Տախտակների այս բովանդակությունը հաճախ է  
փոփոխության իննթարկվում: Անունները փոխվում են:  
Մանսի և Ալլահիերդու համար հատկնաշական են և  
հարգածանությունը և գործարքությունը: Կենդանի  
սրբնակների մենք հանդիպեցինք կարմիր ու սև տախ-  
տակներից մի քանի տասնյակ քայլ հեռավորության  
վրա, ուր ամրան ամիսների ընթացքում, չերք հասուն  
արտերը և գաղտային աշխատանքները կանչել են ձու-  
լարանի բանվար-գլուղացիներին ու նրանք առանց  
այլեալլության լքել են պղնձի պատասխանառու ֆը-  
րոնտը և մանգաղի գոչից բռնած ապրել են մանք սե-  
փականատիրական ամառնային իրենց իգիլիան, ահա  
նրանց լքած պոստերում, յոթը հարգածային բանվոր  
ներ ամրան ջեղձուցիչ շոգի մեջ, բորբոքուն հնոցնե-  
րի առաջ, առանց բռնե անգամ վարանելու կատարել  
են 12 հոգու աշխատանքը:

Խորը պատկառանքով համակված և, վոր մտնում  
ես ձուլարան և ծանոթանում աշխատանքային ֆրոն-  
տի ալդ հերոսների հետ:

Գ.

Մոսկվան Ալոր—

Զուլարանի ցեխի վարպետը, կոմբջիջի կոլեյու-  
բոյի նախագահը: Կազմակերպողն ու ղեկավարողը  
հարգածայինների գրոհի:

Ժպտուն գեմքով ու վառվուոն աչքերով, արծվային քթով այս բանվորը մեզ վբա թողնում է խորը տպավորություն:

Կրակի կարծերից պաշտպանող խոշոր ու լրջած փակ ակնոցները քաշել ե ճակատին և այդ դիրքով հիշեցնում ե պատասխանատու սավառնակ զեկավարող ըոտչիկի. Ակամայից հիշում ես Զուխնովսկանա Հիրավի, Ակար Մոսինյանը և նմանները սոցիալիստական շինարարության ֆրոնտի Զուխնովսկիներն են. Նույնքան մարտունակ, խիզախ վճռական:

Ընկ. Ակոր Մոսինյանը մեզ մանքամասն ծանոթացնում է «Ճոճարը» հանքաքարը հալելու և պղնձի ստացման պրոցեսների հետ: Յեվ նրա խոսակցության վորպիս կենդանի իլլուստրացիա, ահա հնոցից գուրու չերկարված խողովակից հոսող ջրի մեջ և ժայթքում բոսրավառ հրահեղուկը, վորը ջրի արագավազ սահանքում գեր մի քանի բովկ կարողանում ե պահպանել իր բոցեղին գույնն ու գեղեցկութիւնը:

Պղնձի հեղուկացած հոսանքն ե վառվում ու ժայթքում անընդհատ:

Պղնձի ֆրոնտի մարտիկներն են դառնում նրա շուրջը և հեթանոսական ակնածությամբ հսկում կրօսկի ու կրակալին հեղուկի բորբոքավառ ընթացքին:

Նրանք պատրաստ են կանքով անդամ բորբոքություն պահելու հուրը հնոցներում և հրեղեն հեղուկը հնոցներից ժայթքող: Մենք այդ ենք կարգում Ակոր Մոսինյանի աչքերում, նրա գեմքին:

Ընկեր Մոսինյանը սակայն ցանկանում է փորձել մեր «գիմացկությունը»:

Բացադրելով պղնձի ձուլման պրոցեսը. նա մեզ

առաջնորդում է, «ընդհուպ» մոտեցնում ե հնոցի այն մասին, վորտեղից դուրս ե ծորում կրակի հեղուկը:

Թվում եր հեշտ ե մոտենալ այդ գեղեցիկ տեսարանին: Դիտել հրեղեն հեղուկի ակունքները: Սակայն քալիկի մոտեցման գուգընթաց մեր աչքերը գնալով քալիկի արցունքակալվում են, կոկորդները սեղմակում, ավելի արցունքակալվում են, կոկորդները սեղմակում, ծեկծում, սիրուը ասես կանգ ե առնում և շնչելը դըմականում ե:

Մոսինյանին ի՞նչ. նա գնում ու բացատրում է: Մինչ մեր հարգելի գրաքննադատը գունատ ու այլայլված փախչում ե հնոցից: Ծծումբը շնչել չի տալիս: Խեղդում ե:

— Վոչ, ընկեր Մոսինյան, մեր քննությունը չը բանեց: Ծծումբի և այլ նյութերի, կրակի ու ծիփ ալդ մշտաբորբոք հնոցների առաջ մենք մի քանի բոլի անգամ անկարող յեղանք կանգնել: Իսկ դու այստեղ ավելանում ես պղնձի, կրակի, ծծումբի հետ: Մաքամաքառում ես պղնձի, կրակի, ծծումբի հետ: Մաքամաքառում ես պղնձի ավելանում և նաև արեգակնային հնոցի հարյուրին ավելանում ձեզ վրա, դու և քո նմանները ավելի յեք ձակումը ձեզ վրա, դու և քո նմանները աշեղուկում ձեզ հարձակութեները և կատարում աշեղուկապատկում ձեզ հարձակութեները և կատարում աշեղուկի իստանքալիին ֆրոնտի զասալիիքների գործը, վորպեսպի կրակի հեղուկը շատ և ուժգին ժայթքի, հնոցները մշկրակի հեղուկը մենք և յերկիրը վառվի պղնձի ու միտատաբորբոք մենք և յերկիրը վառվի պղնձի ավագութիւն կարգավորում է:

Վորպեսպի հաղթանակի պղինձը, պողպատը, չուգունը, յերկաթը:

Ինդուստրիան աիրապետի բորբոսի ու տեհնդի մեր յերեկվա յերկրում:

Հաղթանակը մերը մինի: Վերջին ու վճռական,

Հարգանքով և վողեվորությամբ ևմ արձանագլուխ այս տողերը ձեր մասին ընկեր Մոսինյան, ձռւլարանի հերոս հարգածայիններ, սոցիալիստական ֆլորոնտի անվարան մարտիկներ, և սիրում ենը բանքից, յերբ այս վտիտ տողերի միջից՝ տեսնում եմ ձեր հերոսական գեմքերը ծիրանավառ հնոցների, կըակե հեղուկների, ծխի, սոցիալիստական աշխատանքների պայծառ փոնի վրա:

Դ.

Մանեսից մինչև Ալլահվերդի ձգվում և վոլորուն շոսեն, Փարվում սարերի լանջին, մերթ անհետանում ու բարձրանում:

Շուրջը լեռների հավիտենական կլոր պարն և Ասես հարյուրավոր փափախավոր գլուզացիներ, թառակըավոր գեղջկուհիներ ուս ուսի դառնում են:

Հիացքով ես դիտում վիթխարի այդ գեղեցկությունը:

Թալլում ես թումանցանի և Սարյանի հետ:

Լեռնակատարների ժանիքներից պատառուն, ահա յերկնակամարի մերթ լուրթ և մերթ կաթնորակ ծվինները, Ռւր և Արարատյան դաշտի վրա հակված կապույտ վրանը:

Լալվարը խսժուել ե: «Նոթերը կիտել»:

Յեկ նրա մոայլ ֆոնին, նոյնքան մոալլ, ահա Զեյրան-Ողլի վիթխարի ժալոփ Զվարթնոցյան գմբեթը:

Ճարտարապետական կժթող և այս, հայկական մի վանքի կիսակործան բեկրը:

Վոչ բնության խաղն և այս, Համոզվում ես վորքան մոտենում ես նրան:

Բայց ինչքան են այդ խաղերը:

Ճանապարհամերձ ժայռերի մեջ ահա ասորական մի արքայի կատարչալ դիմաքանդակը: Բոլոր մանրամասնություններով: Հոնքեր, քիթ, միրուք, բեխեր: Թագ ու պատմուման:

Վայր հաճարեղ անդրիագործի բրիչի աշխատանքն և այս:

— Վոչ վոքի! — Բնությանը:

Վայրկենական իլլուզիաների նման ընծաներով լի, դառնում և շոսեն սարերի լանջերով և հետմզում ձորը: Նա գնալով ավելի առհելի յէ դառնում: Ավելի խորը:

Հեռվում թողել ենք Մանեսի ձուլարանի ծինելուզը, վորի արձակած ծխի կապտամշուշ քողի միջից յերեւմ և Մանահին գլուզը հանդիպակաց բարձրավանդակի վրա:

Արդեն բարձունքումն ենք:

Ճերմակ շոսեն բազմաթիվ վոլորտներով և լուսակ և ձորում ու սարլանջերին:

Ասես մի վիթխարի բեռնակիր կտավի բազմաթիվ թոփերով բարձրացել և այս գերելքով և գագաթում կանգնած ձեռքի անփուլթ շարժումով ներքեւ և շըպըտել կտավների թոփերը, վորոնք ժապավիճակներ են սարերի կանաչ լանջերին և իջել մինչև նրանց փեշերը:

Մեղ տանում և իսմալին իր յեռանդակով: Դիմք մաղապատ և, դեմի լեռների նման: իսկ գլխին ասես ծածկել և հանդիպակաց լեռնակատարներից մեկի մակեր:

Բուանհինդ տարի անընդհատ իսմալիի լեռանդակը բարձրացել ու իջել և այս միենույն ճանապարհով:

Քսանհինդ տարի նա միենույն տակտով ղեկավարել ե  
իր յերեք ձիերին:

Իսամալիլը սակավախոս ե: Մեր հարցերին հազիվ  
ե պատասխանում, կիսահայերեն, կիսաթուրքերեն:

Ի՞նչ խոսի:

Քսանհինդ տարի անընդհատ շրջակա լեռների  
մուայլությունն ու համրությունն իրենց կնիքն են  
դրել նրա բնավորության, տրամադրությունների վրա:  
Նա ժառանգել է նաև այդ լեռների միապաղտ-  
դությունն ու հանգարատությունը:

Ասում ենք-իսմայիլ արագ քշիր:

— Յնի,-ասում ե-սորա ձորա թյորուրամ, խալ-  
տառակ ոլուրամ:

Բարձրանում ենք: Բարձրանում:

Շոսեն վերջանում ե:

Յե.

Անհրապուլը ե Ալլահվերդու շախտալին կոմի-  
տելի գրասենյակը: Մի քանի պլակատներ: Գրամե-  
քենայատիպ խունացած գրություններ: Խմբական լու-  
սանկարներ և ալին:

— Ո՞ւս, — մեքենապրուհուն ե դիմում շախտալին  
կոմիտեյի քարտուղար ընկեր Աթոյան Միքալելը,—  
թող ձեռքիդ բոլոր գործերը և տպագրիր այս նկու-  
թերը, վաղը սեպտեմբերի քսանն ե, ինդուստրացման  
որը, պատի թերթին անպալման պիտի գուրս գա:

Իսկ շախտալին կոմիտեյի գեռ նոր առաջքաշված  
հանքափոր նախագահ ընկեր Կայդանով Անդրելը  
դուն մոտ վիճում ե յերիտասարդ հանքափոր Ազիդ  
Խալիլ Ողլու հետ: Համոզում նրան:

Խալիլ Ողլին գնալով ավելի լի բարձրացնում  
ձայնը: Գոռզուռում ե: Ավելորդ շարժումներ տալիս իր  
թիկնեղ հասակին, կեղծ վրդովմունք պատվաստում զե-  
ղեցիկ դեմքին, խոշոր աչքերին: Ողում տարութերե-  
լով մի պատառուուն կոչիկ բղավում ե:

— Բուննան իշլամարամ:

— Յնի, իշլամարամ: Վալլահ:

Յերբ խոսակիցը նրան հիշեցնում է ալլ պարագա-  
ներ և պարտականություններ, նա ավելի վրդովմած  
բացականչում ե:

— Կոմսոմոլ ոլում, խաթիւա թյուշդում: Յոխ  
իշլան գալել ամ:

Ընկեր Կայդանովի համոզիչ խոսքերն իզուր  
անցան և Ազիդ Խալիլ Ողլին վրդովմունքի ամպբո-  
գով գուրս գնաց:

Հարցը պարզ եր: Ազիզը պատոված կոչիկով աշ-  
խատել չեր ցանկանում: Այսինքն սա լի սիմուլաց-  
իալի ալլ տեսակն ե:

Առավոտան պատահեցինք Խալիլ Ողլուն, Նոր  
կոչիկները հագին, գեղեցիկ դեմքին ինքնագոն ժպիտը,  
ձեռքերը կոնակին դարսած զրունում եր շտխտերի  
շուրջը:

Հաջորդ որը, յերբ Խորհրդային Գրադների Ֆե-  
դերացիայի միորիա, «Գրող Հարվածային» թերթի  
համար մեր նկարիչը հարվածային բանվորների գեմ-  
համար մեր նկարիչը հարվածային բանվորներին  
քերը նկարելուց հետո, միաւույնաներին  
նրանց նույնպես «անմահացնելու» համար, առաջինը  
առան տվին Ազիդ Խալիլ Ողլու անունը: Նրան առա-  
նելի աշխատավոր աշխատավոր աշխատավոր աշխատավոր  
աշխատավոր աշխատավոր աշխատավոր աշխատավոր:

Յերբ նկարիչը փորձում էր գծելու հարվածային ների գեմքերը՝ նրանք, հրաժարվում ելին, ավելորդ ելին համարում թուլլ չելին տալիս:

Վորքան հատկանշական ե սակայն սիմուլանին, Յերբ առաջարկում ենք Խալիլ Ողլուն նկարել նա առանց այլեվայլութեան պազում և առաջին իսկ քարի վրա և պոզա ընդունում:

Մի քանի ժամ անց նու հապճեպորեն մեղ մոտ է գալիս:

Ընկերներն ինչպես լերեւում ե հասկացրել են, վոր միայն սիրուն աչքերի համար չեր վոր «քաշվեց» նրա նկարը, վոր այդ նկարը՝ «խաթա» յերեկու իր գլխին: Վոր վասակու յա իրեն:

Յեկ Ազիզը գեմքի համեստ մի ժպիտով մեղ հարցում է.

— Բանըմ շաքիլըմ նի՞տ չեքդինը.

Ասում ենք վոր սիրուն տղա յես: Հաղթանգամ: Քաշեցինք, տպենք վոր ժողովուրդը տեսնի: Յեկ իրոք Ազիզը գեղեցիկ էր ու հաղթահասակ:

Բայց նա չե հավատում մեր ասածներին: Այս թե՛չ տարի յե, վոր սիրուն աչքերի ու բարձր հասակի համար մարդկանց նկարները «քաշեն»:

— Յոփի իսթամիրամ, — առարկում է նա:

Համոզում ենք:

Պարզապես չենք վերադարձնում նրա «շաքիլը»:

\* \*

Սիմուլանաները, աշխատանքի դասալիքները բավական «պատկառելի» յեն այստեղ, նրան հանդիպում ես աշխատանքի վալուերից դուրս:

Ահա մեղ հետ քայլող հանքափոր տասնապետ ընկեր Սանդրոն իր գեմն յեկող մեկին հարցնում է.

Վորդի յես, չես գալի:

Նա ինչ վոր պատախանում է ցածր ձայնով: Յերեկի ամաչում է, վոր իր պատճառաբանութիւնն ուրիշները լսեն:

— Շուն շան վորդի... հարեց Սանդրոն բարձրաձայն, — ամսեկան քսան չորս անգամ մորը մեոցնում ա... Զի ամաչում... թյունուն...»

— Ինչպես թե, հարցնում ենք զարմացած:

— Այն, — ամեն անգամ ասում ա թե մերս մեռավ և զործի չի գալիս: Մերն ել սաղ նստած ա:

Աշխատանքային դասալիքության մի նոր ձև: Յեկ տաբորինակ:

Այդ դասալիքությունը սուր կերպով վտանգ և սպառնում արդինպահների կատարմանը: Մի վտանգ, վոր Ալլահվերդում վաստ է: Նրա համար ել մենք Ալլահվերդու բանակումբի պատերին գրած մեր լոգունգների ու արտազրական շասոււկաների մեջ յերբեք մոռանալ չկարողացանք սիմուլանին և նրա հասկանալի ու չկարողացանք ամսուլանին և նրա հասկանալի ու կշռամմող լիդվով այսպիս գրեցինք ակումբի պահին:

«Քանի որ ես մեջ տալիս,

Այ դու մունդրիկ սիմուլանս,

Մի որ «բույլ» ես չես գալիս,

Ու մի որ ել կեղծ նիվանդ»:

Իսկ մանր սեփականությանը կառչած ու իր այծով և մանգազով տարված «բանգորւի» մասին մենք այսպիս գրեցինք:

«Յծը հետն ա շախս գալիս  
Ու մի էիչ ել բեղամադ  
Ուժը շախտին չի տալիս—  
Ես «բանվորիս» մի բամատ»:

Մի քանիսը այս «մարտիկներից» վոչ միայն աշխատանքի վայրում, այլև գրսումն ել չեն լիրկում, ուր են անհայտացել։ Ահա մենք փնտում ենք Չոլախսավոզ հվանին «անմահացնելու» համար, բայց նա չկա ու չկա։ Յերեխ տանը պառկած թաջ նազարյան սրտոտությամբ ու թափող... ճանձեր և սատկացնում։

Ո՞վ իմանա զբանց բանը։

### Զ.

Դասալքում են նրանք, զորոնք մեծ մասամբ դեռ նոր են փոխվում բանվորական կաթսավում, վորոնց մի վոաքին գեռ տրեխ ե, մյուսում՝ սապոզ, վորոնց մի ձեռքին գեռ մանզաղն է զողգողում, վորոնց աշերը զրսում հանքերի շուրջն արածում են և սպասում, զոր իրենց «տերը» դա հանքից և ախոռ առաջնորդիր։

Իսկ նրանք, զորոնք հանքերում ու արհեստանոցներում կյանք են մաշել, զորոնք խփել են քլունկը ֆրանսիական շահագործողի համար և այժմ մեծ փողկորութեամբ սոցիալիստական շինարարութեան ֆրոնտում վճռական հարվածներ են տեղում, նրանք աշխատանքը լքել չեն կարող։ Ստիպես ել չեն ճեռանում։

Ահա նրանք։ Հետ են լեկել արձակուրդից, դեն են նետել աշխատանքի հաշմանդամության, աշխա-

տանքի հերոսութեան իրենց վկայականները և լեկել են լրացնելու դասալիքների տեղը, լեցնելու արդ՝ ֆինպլանների նեղվածքները։ Դրսում՝ յերիտասարդ, կենսունակ, թիկնեղ Ազիզները, Զոլախսավովները և նմանները շրջում են, իսկ ներսում՝ հանքում արհեստանոցնում, տարիքուտ, աշխատանքալին տասնամյակ-ներ բոլորած մարտիկները՝ վասնում են իրենց հանունը բոլորած վորագինները։ Դադար հաղթանակով ավարտիւ։

Նրանց առաջարկվում է հանգստանալ, բայց նրանք գարձաւ իրենց նախկին դիրքերի վրա լին, վորպես հարվածայնության վորուրող տիպարներ։ Ահա նրանց պատկառազդու դեմքերը։ Ահա նրանց

բանք։  
1. Կարադալիսով Կոստյա։ Հին շախտուր, վաստակավոր բանվոր թոշակառու։

2. Գուչիով Ֆեոդոր—դարբին, աշխատանքի հերոս, թոշակառու։

3. Խոփչին Ֆոմա—վաստակավոր բանվոր, թոշակառու։

4. Գավրյան Իվան—վաստակավոր բանվոր, թոշակառու։

Յեկայապես շարունակվում է նրանց անվանաշարքը մինչև 12 մարդ։

Աշխատանքայի ֆրոնտի վաստակավոր այս բոլոր մարտիկները, կամավոր կերպով հանքերն ու արհեստանոցներն են վերազարձել վոր արդինպլանները նեղվածք չտան, վոր սիմուլացների, ալժատերերի ու մանզաղավորների լքած գործը թերի չմնա։

Սրանից դատ բանվորների մեծագույն մասը զ-

հում են իրենց հանգստի որերը, գնում են աշխատանքի, փրափեսզի պղնձի պլանը լրիվ կատարվի:

Աշխատանքի այս ենտուգիազմը, «պատախանը սիմուլյանտերին»—համակել ե բանսորների ընտանիքի անդամներին, վորոնցից շատերը ցանկություն են հալտնում աշխատել պղնձի նվաճման ֆրոնտում:

Մանեսում՝ Մոսինյանները, Պիլլցեմերը, Ալահվերդում՝ Կարագավիտովները, Խոփչոնոները, Գուչկովները, Դավթյանները վաստակավոր այս մարտիկները և գարձալ Ալլահվերդու լավագույն հարվածայինները —Խերիւանով Պավելը, Կարպէնկոն, Կերմանցկին, Մուսա Կուլի Ողլին, սոցիալիզմի կառուցման ֆրոնտի ինտերնացիոնալ այս հերոսները քեզ լիովին հավատացնում են, վոր թույլերի, հոսեանների, տագնապոնների, դասալիքների փոխարեն, նրանց հասցրած վասի գիմաց, իրանք ընդունակ են պատվով ու խիզախությամբ կատարելու դասակարգչին պարտը իրենց խանդավառությամբ համակելու մեր աշխատանքային վողջ բանակը և ծածանելու սոցիալիզմի կառուցման հաղթանակի գրուը:

Պղնձի ֆրոնտի այդ մարտիկները:

Ե.

Ամենուրեք համդիպում ես ֆրանսիական խավաքարտե բարձր ու կլոր գլխարկների:

